Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

№ ~~1111~~ 2149

# ՃԱՆԱՊԱՐՀ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ

## ՅԱՄԲՐՈՍԷ ՍԷՐԼԵԱՅ

ԵՒ

## ԵՐԿՆԱՅԻՆ ՇԱՒԻՂ

ՅԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿԷ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ


Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Շ. ՍԱՐԳՍԵԱՆՑ

ԱՇԱԿԵՐՏ ՍՐԲՈՅՆ ՍԱՆԴԻԽՏՈՅ



'Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱԶԳԱՍԻՐԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ

'Ի ԿԱԼԿԱԹԱ

1850



3339-41

1451

1030

## CONTENTS.

I. THE WAY TO BE HAPPY.

II. HEAVENLY PATHS.

# ՄԵԾԱՐՈՅ
## ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ՄԿՐՏՉԵԱՆ ԱՍՊԵՏ
### ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՔԵՌԻ

Եթէ ճանաչելով զերախտիս Հայրախնամ
բարերարութեանդ՝ ջանայի մեծարել զձեզ
ամենատկար կարեօքս, զի՞նչ արդեօք առա-
ւել առնէի՝ քան զոր պարտապան։

Ապաքէն զձեզ ճշմարիտ հայր և հեղինակ
լուսաւոր ուսմանցս խնամեալ՝ առաւելուն
յիս պարտիք ըստ արժանեացդ փոխարինու-
թեան՝ որ 'ի վեր է քան զամենայն արժէս իմ,
Շնորհեցեր ինձ զճանապարհ յաւիտենական
Երջանկութեան՝ զՈւսումն գրագիտութեան,
և ես խոնարհաբար ԶՃԱՆԱՊԱՐՀ ԵՐՋԱՆԿՈՒ-
ԹԵԱՆ յանցաւոր աշխարհիս այսմիկ, զիմաս-
տութիւն Հօր Յիսուս՝ ձեօք ծանուցեալ՝
ձեզ վերընծայեմ իբրև զծաղիկ իմն գրա-

ւորական վաստակոցս , և այն ունիմ զի զօրա-
վագութ սիրով ընկալեալ՝ յաւելջիք առ-
իս զշնորհս խնամոց ձերոց՝ որպէս միշտ , ո-
րով մարթացայց այսուհետև փնջել ՚ի հոտ-
անուշից հաճութեան ձերոյ՝ ծաղկունս եր-
կոց քան զայս հաճոյականս :

Ամենախոնարհ ծառայ և Քեռորդի Ձեր

Յ. Հ. ՍԱՐԳՍԵԱՆՑ :

## ՃԱՆԱՊԱՐՀ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ մարդ կենդանի խնդրէ զերջանկութիւն, բայց բազումք խնդրեն զայն թիւր ճանապարհաւ. ուստի և ո՛չ գտանեն։ Համարին զի եթէ կարիցեն գտանել միջոցս լցուցանելոյ զամենայն փափագս իւրեանց, և կարիցեն 'ի ձեռս բերել զտևականութիւն այնց միջնորդաց՝ լինելոց են յայնժամ յոյժ անվիշտ անխռով կամ երջանիկք։ Բազումք 'ի մարդկանէ թոյլ տուեալ լինին յաստուածային տեսչութենէն գտանել զորոց միանգամ զհետ որսան, բեռնաւորիլ կամ ծանրանալ ճոխութեամբ և պա-

տուով. և ամենայնիւ՝ որ ինչ աշ-
խարհս կարէ տալ նոցա. զի յոր-
ժամ գտանիցեն զայս ամենայն, աշ-
խարհ ապուշ կրթիցի ՚ի վերայ շքե-
ղութեան և երջանկութեան նո-
ցա, Սմանք ՚ի յողորմելի բարձ-
րացեալ տառապելոց, թոյլ տու-
եալ լինին կործանել զինքեանս, և
նովաւ անթերի հրատարակել աշ-
խարհի զթշուառութիւնս իւրեանց։
Իսկ այլք՝ որք ո՛չ գնան ցայնչափ
երկարութեան՝ գնան այնքան՝ մինչ
հաւանեցուցանել զամենեսին թէ
իցեն թշուառական և անհանգիստ
արարածք. ամբարձեալք գեր ՚ի
վերոյ հասարակ ժողովրդոց յապա-
ցոյց ապերջանկութեան իւրեանց՝
քան զայլոցն ամենեցուն։ Աշխարհ
բեռնաւորեալ է թող զսիրտ մար-

դոյ․ բայց երբեք ո՛չ կարէ լինել զայն ։ Աստուած ո՛չ արար զնա վասն այսպիսի իրիք պատճառի , ո՛վ ուրեմն ցուցցէ մեզ զբարութիւն ․ — ո՛չ աշխարհ , ո՛չ մարմին , և ո՛չ դևն ․ վասն այսր կոյժ անպարտրուակ պատճառիս՝ զի չունին նոքա զբարի ինչ յանձինս իւրեանց ։ Ո՛ ինչ մարդ գնայ զճանապարհ աշխարհիս այսորիկ և խնդրէ պարարել զհեշտասէր մարմին իւր ՚ի միաբանութեան ընդ սատանայի՝ վասնորոյ և է , և պարտ իսկ է լինել թշուառական ոմն , որ խոստանայ անձին իւրում խաղաղութի՛ , բայց գտանէ և ոչ ինչ ․ մաշէ զինքն ըզհետ որսալով ստուերի միայն ․ և ՚ի վերջոյ նստի ունայնացեալ ։ Ճգնի նա ամենայն զօրութեամբ մարմնոյ

և հոգւոյ իւրոյ՝ շահիլ ինքեան զառանձնութիւն յընդհանրական ողորմութենէ, և եթէ թողեալ լիցի զօրութեանց այնոցիկ՝ միայն խորագոյնս ընկղմի։ Բայց է տեսակ ինչ մարդկան յաշխարհիս՝ որք ասեն թէ՝ կարեն ցուցանել մեզ զայս բարի. այսոքիկ կոչեն զինքեանս 'ի քրիստոնեայս և ցուցանեն մեզ զգիրս Աստուծոյ և զշնորհս Աստուծոյ. որպէս զմի միայն աղբիւրս մխիթարութեան 'ի ցաւագին և 'ի սոսկալի աշխարհի այսմիկ։ Խօսին ուղղութեամբ. զի եթէ Աստուած ոչ կարիցէ առնել մեզ երջանիկս, ստեղծուածք նորա ստուգիւ ո՛չ կարեն. և եթէ նա խոստանայցէ առնել այնպէս, որպէս և գտանեմք զի առնէ բանիւ իւրով, անտարա-

կոյս հաւատալ պարտ է. և մեք չեմք ինչ խաբելոց։ Ե՞ն ուրեմն քրիստոնեայքս այսօրքիկ երջանիկ ոմանք. ժառանգեցէ՞ն զայս բարի, ունի՞ն զոգի զոհ։ Ե՞ն սիրտք նոցա յանդորրու։ Ուրա՞խ լինին յաւիտեան։ Այսու առանձնաշնորհութեամբ ուրախ լինել պարտին՝ որպէս ասացաք բանիւ և շնորհօք Աստուծոյ. և պարտին իսկ լինել այսպէս. բայց եթէ նայեցեմք ՚ի նոսա՝ ո՞չ գտանեմք սիրտ ախտացեալ. զոգի խռովեալ և միտս ապերջանիկս։ Երանի՜ թէ կարեցեմք ասել զայս վասն փառաց շնորհացն Աստուծոյ, և վասն պատուոյ աւետարանի նորա. բայց այդ ո՞չ կարէ ասել։ Բազում և բազմագոյն ՚ի վարդապետաց այնքան խռովեալ են,

այնքան անստոյգ, և այնքան թշուառական, որքան և անհաւատ և անաստուած աշխարհ շուրջ զնոքօք ։ Ոչ․ զի և ոմանք ՚ի նոցանէ ունին զտրտմութիւն․ և տեղի ես տան տրտմութեան՝ զոր աշխարհ նպատակէ ձգիլ ՚ի նոսա․ և ոչ միայն ապերջանիկ են՝ որպէս և մերձաւորքն, այլ անտարբերք և բազմաց ՚ի նոցանէ երևին լինել այսպէս ։ Այսու ամենայնիւ աշխարհս բամբասէ զաւետարանն վասն ստեղծանելոյ մեզ զաւելորդ տրտմութիւնս․ այնինչ Աւետարանն չունի զառիթ տրտմութեան կամ՛ ո՛ և իցէ թշուառութեան՝ քան թէ արեգակն՝ խաւարի ։ Աւետարանն չունի ինչ ընդ տրտմութեան, բայց ջանայ ՚ի բաց փարատել զայն ։

Այս վարդապետք ոչ միայն չու-
նէին զայն յանձինս իւրեանց՝ այլ
և յանձանց եւս իւրեանց։ Տան նո-
քա բարեպաշտութեան մերում՝ գլխո-
թագին որակութիւն· և առնեն զա-
մենայն շուրջ զիւրեամբք հիւծեալս
յաստուածապաշտութեան։ Խայ-
տառակեն զճշմարտութիւն առանց
առնելոյ զգործ ինչ պարտեաց կամ
պիտանութեան անձանց իւրեանց՝
կրօնից իւրեանց՝ կամ անձին ումեք։
Հայեսցուք ՚ի նիւթ այսր և քըն-
նեսցուք զոմանս յարանց յայսցա-
նէ՝ ըստ հանգամանաց նոցա· զի
կարասցուք ցուցանել նոցա համա-
ռօտիւ թէ որպէս իցեն նոքա ար-
տաքոյ Ճանապարհի· և կամ թէ որ
իցէ Ճանապարհ երջանիկն լինելոյ ՚ի
թշուառական աշխարհիս այսմիկ։

Բայց ինձ արժան է ուղղել զիս
ինքն նախ առ մարդն՝ որոյ սիրտ
հաստատեալ կայցէ ՚ի վերայ երկ-
րի. մին պիտի խկոյն հաւանիլ ե-
թէ չիք հարկ ասել, (եթէ ոք չգի-
տիցէ զընդհականն.) եթէ չիցէ
երբէք ՚ի ճանապարհին երջանկու-
թեան. զի անպատրուակ ինձ է զոր
ինքնին զգայ պատնապես: Արդա-
րև բարեկամ իմ, տառապեալ մահ-
կանացու ոմն ես. Յերեկի էր ծը-
նունդ քո. և վաղիւ բարձեալ
տարցիս ՚ի գերեզման. սիրտ քո
հաստատէ զոր ինչ ասեմս, յոր-
ժամ ասիցեմ քեզ, (կամ մանա-
ւանդ բանն Աստուծոյ,) թէ յամե-
նայն ՚ի կեանս քո լեալ իցես առար-
կայ կապանաց բազում չար և չնա-
սակար ցանկութեանց. որք խոստա-

ցան զբազում խաղաղութիւն, բայց
յամենայն ժամ խաբեցին զքեզ ։
Դու չեղեր երբէք ճշմարտապէս
երջանիկ, խոկումն 'ի վերայ ան-
ցեալ կենաց քոց վշտագին է ։ Եր-
կայ վայրկեանք քո անհանգիստք
են, և տակաւին զհետ երթաս զորոց
հազիւ կարես ասել ինչ ։ Ապագայք
քո նոյնպէս խաւարինք են, և զար-
հուրելիք, և մահ և դատաստան,
ոչ 'ի միտս անկանին քո՝ առանց
զարհուրանաց ։ Այլ 'ի մահ և դա-
տաստան պարտիս փութանակի գը-
նալ, և կարիցե՞ս երազել ինչ ըզ-
ներկայ վիճակէ քո, կարիցե՞ս կալ
այնպէս ապուշ և աղամար, մինչ
խաղ առնել զկախօք գերեզմանի,
և զէրամբք զժոխոց, չէ՞ք քո փոյթ
ինչ եթէ անցուցանիցես միլլոնա

միլիոնս ամաց ՚ի վեր քան զամենայն թիւ և ժամանակ ՚ի թշուառութեան կամ՝ յերջանկութեան ։ Երկինք չե՞ն ինչ առաջի , Քրիստոս չէ՞ ինչ , Աստուած՝ որ ստեղծ զքեզ չէ՞ ինչ . կամ՝ կարիցե՞ս նախադասել դու քեզ զներկայ անկողինս փշոց և զամենայն անհանգիստ հետազօտութիւնս սնոտի և բազմազբաղ աշխարհի , զոր թողլոց ես ՚ի միում՚ի վայրկենի , և պարտ իսկ ես թողուլ թէ կանուխ թէ անագան՝ վասն հաստատուն երջանկութեան՝ զոր Աստուած տալոց իցէ թէ աստ և թէ հանդերձելումն ։ Ընտրես զայդ և ընտրեսցես ու ՚ի յաւիտենական կորուստն քո . եթէ Աստուած՝ որ արար զքեզ ո՛չ ապատեսցէ զքեզ ՚ի պատրանաց քոց

և 'ի մոլեգնութեանց ։ Ընչքիցե՞մ
դու ամենայն ողխութեամբ չա-
րեաց , անարգես զբան Նորա . և
այպն առնես զհաւատովք՝ եթէ
ամենակալ շնորհքն չզարթուցա-
նիցէ զքեզ և տացէ քեզ կեանս 'ի
մեռելութենէ մեղաց ։ Իսկ եթէ դու
'ի վախճանի կորուսանիցես զկեանս-
յայսմ ցաւալի և յանապաշաւ վի-
ճակի մնաց (ո՜հ լո՛ւր և սարսեա՛ց ,)
մեռանիցիս և դատապարտիցիս յա-
ւիտեան , Մա՞րկ , 16. 16. Ամենա-
կալն Աստուած տացէ քեզ զա-
պաշխարութիւն 'ի կեանս , և յայն-
ժամ պատրաստ լիցիս մտանել
'ի ճանապարհն երջանկութեան ։
Բայց զարթուցեալ լիցես արդեօք
տեսանել զկարօտութիւն քո 'ի
Քրիստոսէ , եթէ առանց Նորա

կորուսեալդ ես յաւիտեան, Օրհ-
նեմ զԱստուած վասն այսր աւե-
տեաց ողորմութեան, եթէ ճանա-
չիցես զքաղցր շնորհաց Նորա և ար-
դարութեան անդրդէն և անդրստու-
գապէս զոհանաս ընդ այն։ Մատ.
5, 6։ Հայեաց 'ի Նա միշտ վասն
առաւելութեան հաւատոյ և զօրու-
թեան, որով կարիցես ընթանալ
որպէս Ենովք ընթացաւ. և ըն-
դունիցիս զամենայն երջանկութիւն
քո 'ի Նմանէ։ Գիտեմ զի եթէ զօր-
ծըք շնորհաց սկսեալ են 'ի քեզ.
ունիս միշտ ժամն ինչ երջանկու-
թեան առ որ ոչ խառնեցի օտար։
Վայելիս զպատուական պարգևս
սիրոյ Նորա, Նստիս ընդ հովանեաւ
Նորա 'ի ժամանակին բազում բեր-
կրութեամբ, և ընկալցիս զերա-

Նարար օծութիւնն 'ի հոգի քո ։ Սիրտ քո բաղձիցս լուցանել սիրովն առ Քրիստոս, և միշտ վառել 'ի քեզ որպէս 'ի սիրտս աշակերտացն յԷմմաուս, մինչ խօսիցի ընդ քեզ նա բանիւն իւրով, և զօրացուսցէ զքեզ յօրէնս իւր ։ Ո՜հ որքան բաղցըր լիցի Քրիստոս հոգւոյ քում յայսպիսի ժամանակս. ո՛չ ոք բայց թէ Քրիստոս է բարբառ սրտի քո. ո՜հ զինչ լիցին բիւրք աշխարհաց համեմատեալ ընդ նմա, որ արար զամենեսին զնոսա ։ Ո ի՞նչ լիցի քեզ իմն կամ՝ ամենայն ինչ, յորժամ Քրիստոս չիցէ ընդ նոսա ։ Հոգի քո ծարաւի է առ Աստուած. այո՛ և առ Աստուածն կենդանի ։ Նա է ճշմարիտ կեանք քո, շնորհք նորա գործեն զամենայն 'ի քեզ և առնեն

զամենայն վասն մեծարելոյ զքեզ·
շարունակեմ, այս է միջոց արտաքոյ
ճանապարհի երջանիկն լինելութե՟ն
՚ի թշուառական աշխարհիս: Տե՛ս
Սաղմ, 23, 5—3. Ճշմարիտ ասէ.
փոքրիկ տառապեալ հոգին այդ-
պէս էր և ընդիս անգամ մի · բայց
ամենևիմբ խաւար տարակոյս և
տառապեալ եմ: Այժմ ազամ ես
զամեներկայութիւնն Աստուծոյ · և
ոչ գտանեմ յիս զխաղաղութի՟ն: Եւ
զի՞նչ է պատճառն: Ձեռք Տեառն
կարճառօտեցի՞ն: Նուազեցա՞ւ նա
՚ի սէրն, եթէ դու նուազեցար յաղիս
քո: Թող ինձ հարցանել ցքեզ,
չիցե՞ս անկեալ ՚ի մեղս գիտութեամբ
կամ թոյլ տուեալ նմա: Խոհա-
կան լեալ իցե՞ն ընթացք քո և պարզ·
գործք քո առ մարդիկ արդա՞րք ի·

ցեն և ճշմարիտք, և այնպիսիք որ-
պէս եթէ կարիցես տարածել զնո-
սա յաղօթս առաջի Տեառն։ Զու-
նիս պատրանս ՚ի տուր և առս, կամ
զայլ անիրաւութիւն։ Եթէ իցես
դու Տէր և կամ Տիրուհի ոք, ոչ
ակնառութիւն կամ անհաւատու-
թիւն։ Եթէ ծառայ ոք իցես, կա-
րիցեն վարք քո՝ եթէ ծանուցեալ
ամենայն մարդկան, կալ դատաս-
տանի, որպէս թէ պարտ իցեն կալ
դատաստանի ամենատեսին քոյ Աս-
տուծոյ։ Հաւաստի լեր յոյժ,
Աստուած ոչ հաճի երևիլ անդ՝ ուր
մեղքն աճին և սաստկանան։ Եթէ
դու ունիցիս զլոյսն Աստուծոյ՝ տե-
սանելոց ես թէ մեղքն զզուելի և
աղտեղիք են պարարեալք ՚ի կրծի
քում, և լինելոց ես դու յաւիտեան

ապերջանիկ՝ մինչև նզովքն Աքի-
նայ (Յեսուայ 7·13) ոչ բարձցի ՚ի
քէն. և ոչ զանսուրբ ինչ ընդունի-
ցի յոգի քո։ Այս խորշումն յերե-
սաց Տեառն՝ է առաջին նշան տհա-
ճութեան Նորա՝ յառաջին զգու-
շութիւն քեզ, և եթէ այս ոչ ազ-
դիցէ, առնէ զքեզ ամաչեցեալ. ՚ի
միւս նուագին՝ գուցէ առաջի ամե-
նայն Իսրայէլի և արեգական, որ-
պէս արար Դաւթի վասն մեղաց
իւրոց. բարձրագոյնս պատուեալ
և ընտիր՝ որպէս և էրն՝ առաջի ա-
չաց Տեառն։ (2 Սամու. 7—12։)
Սոյգ լեր. ոչ խնայեսցէ նա զգա-
ւազան և՛ յայսմ պահու՝ եթէ սի-
րեսցէն զքեզ. եթէ մանուկ Նորա
իցես դու՝ խրատէ զքեզ վասն չա-
րեաց քոց։ Սոսկալի նշան յանդի-

մտութեան՝ յորժամ մարդ թոյլ
տուեալ իցէ գնալ 'ի մեղս առանց
հարուածոյ գաւազանին Աստու-
ծոյ, կամ առանց համբերելոյ մաս-
նաւոր դատաստանի 'ի վերայ կամ
վասն դոցա ։ Սղմ. 89. 32. Մտթ.
6. 15, Հռոմ. 6. 14 ։ Եբր. 7
6. Հայեա՛ց յայսոսիկ բնաբանս ։
Բայց գուցէ աւելի վշտաց քոց կա-
րիցէ բաղկանալ 'ի թիւր կարծեաց
քոց զԱւետարանէն ։ Գուցէ ան-
կեալ 'ի ձեռս ախալութեան ինչ՝ և
ընկալեալ զսխալ կարծիս զՔ-
րիստոսէ և զփրկութենէ նորա՝ որ
սովորական իմն է . վասն այսորիկ
ունեմ զգուշութեամբ և ազօթեմ
խոնարհաբար առ Տէրն՝ զի յայտ-
նութիւն ինչ առնիցէ, և զոտս քո
դարձուցանիցէ 'ի ճանապարհս ու-

ղիղս ։ Տէր ո՛չ երբէք միաբանե-
ցուցանէ զմոլորութիւն ընդ ծաղու-
երեսացն ․ վասն այսորիկ ճշմար-
տասէր ժողովուրդք ՝ (որպէս ոմանք
անշուշտք են ՝) կորուսեալք զքաղցր
ճաշակ սիրոյն Աստուծոյ և զերջա-
նիկ վայելս ներկայութեան նորա՝
ստուգապէս իմանան՝ զի ամենայն
ինչ ոչ ուղիղ ընթանան ընդ իւ-
րեանս ․ այլ թէ՝ անկեալք իցեն ՚ի
նորահնար իմաստս և ՚ի թիւրեալ
կարծիս ինչ ։ Վասն որոյ պարտին
քննել (որպէս ասացի ՝) ունկնդիր
Աստուծոյ ․ (որպէս Յոբ էր ․ 6 ․ 24 ։)
զի բանայցէ նոցա զկամս իւր և զբա-
նըս՝ ՚ի խոնարհել առաջի նորա ։
Մեծ խոստումն է յԵսայեայ 35 ․ 8 ․
և ՚ի միւսումն 29 ․ 24 ։ Ոչ կարես
յաջողեալ իմաստութեամբ կամ՝ ջա-

նայողութեամբ քով. վասնզի Սաղ-
մոսերգուն ասէ. ո՛վ կարէ համա-
նալ զյանցանս իւր, ո՛չ ոք կարէ ու-
նել զճշմարիտն արդարապէս, կալ
մնալ ՚ի նմա. և կամ վայելել զայն.
բայց եթէ զօրութեամբ Աստու-
ծային ճշմարտութեանն: Բայց հա-
սարակօրէն հետևի՝ թէ ունել զմո-
լորութիւն, է ունել զսնափառու-
թիւն: Ո՛չ ոք է այնպէս ինքնա-
հաւան զոլ, որպէս այն՝ որ ուսեալ
իցէ անձամբ՝ փոխանակ ուսանելոյ
՚ի Քրիստոսէ: Մարդիկ արդա-
հատեն զիւրեանց կարծիս, որպէս
խանդակաթ մարքն առնեն զման-
կունս իւրեանց, քանզի նոքա նո-
ցայք են: Այն և ճշմարտութիւնն
ևս՝ եթէ կալեալ իցէ ամբարտաւա-
նութեամբ, լինի մոլորութիւն իմն.

ոչ ինքնին, այլ յայնց՝ որք այն-
պէսն ունիցին զնա։ Ունել զճշմար-
տութիւն 'ի սէր, է ունել զայն խո-
նարհութեամբ՝ նկատմամբ անձանց
մերոց. սիրով՝ նկատմամբ այլոց, և
ողջամտութեամբ՝ նկատմամբ Աս-
տուծոյ։ Այսմ հաւատարիմ լեր,
որ եթէ հոգի մարդոյ ամբարձցի,
ոչ է ուղիղ 'ի նմա. և յայնժամ չէ
զարմանալի, (եթէ Տէրն մաքուր
սիրով առ այն հոգի, եթէ և՛ հոգին
իցէ մին յընտրելոց իւրոց,) թողու-
ցու զնա խոնարհիլ, խաւարել,
պատկառել. զի կարիցէ բերել 'ի
միտ թէ ոչ ինչ է առանց նորա, և
թէ ոչ կարէ ձողոպրիլ 'ի մոլորելոյ
'ի վարդապետութենէ սրտի և 'ի կե-
նաց. բայց միայն շնորհօք և ողոր-
մութք։ Մեծ օրհնութիւն է երկ-

բայել զիմացութենէ մերմէ․ և յենուլ որպէս տառապեալ՝ պարզամիտ և տգէտ մանկունս՝ ի վերայ լուսոյ հոգւոյն Աստուծոյ․ ի միտ առնուլ և վայելել զբան նորա․ (տես Ա՝ րկ․ 10—15․) Ասեմ վայելել զբան նորա՝ զլոյսն։ Ոչ ի նոր ինչ ընթեռնուլ յայտնի, որպէս բազմիցս թուի, վասն միայն դատողութեան կամ վիճաբանութեան ի վերայ վարդապետութեանցն և դժուարութեանց՝ առանց խորհրդապէս կերակրելոյ նովին, և ճաշակելոյ զքաղցրութիւն առատութեան և շնորհաց՝ չէ արժան թրուշայի՝ վասն հոգևոր շինութեան (տես Սղմ․ 119․ 102․ Ես՝ 34— 8։ 1 Պետր․ 2, 3․ 1։ Յովհ․ 1-2, 3․) Հոգին՝ որ փափագի Աստուծոյ, և ոչ կարէ բա-

ւարարիլ առանց նորա՝ սիրէ գտա-
նել զնա ՚ի բանի իւրում. և զգալ
զքաղցր և լուսաւորիչ զօրութիւն
ընթերցման նորուն ։ Գուցէ հա-
ճել կարիցէ զմիտս մարմնաւորս՝
մխճել ՚ի վերայ խորհրդոց արքայ-
ութեան, բայց ոչ երբէք կարէ
խնայութեամբ ՚ի միտ առնուլ ըզ-
նոսա ։ Նիւթն ճշմարտիւ է նոյն.
բայց եղանակն գիտելոյ զայս նիւթ
կարի իմն զանազան է ՚ի մարմնաւոր
և ՚ի վերածնեալ մտաց ։ Բայց ե-
թէ մարմնաւորք անձինք կարիցեն
երբէք գիտել զայնչափ եւս՝ ձուր
մնայ պիտանութիւն և զօրութիւն
գիտութեան նոցա ։ Ոչ կարեմ տե-
սանել թէ զիա՞րդ առնել կարիցեն
զանձինս ՚ի քննիչս. և թէ ո՞րպէս
կարեն ընդարձակել զտառապեալ

փոքրիկ խմոցականութիւնս իւրեանց առաջի ստեղծակցացն իւրեանց՝ որք առանց շնորհաց տառապեալ և յիմար ստեղծուածք են՝ որպէս և ինքեանք: Աւա՜ղ. աւա՜ղ. զի ունիմք կարի իմն առաւելութիւն այսօրինակ մտօք տեսակ գիտութեանց ընդ միզ: Ունիմք զմեծամեծ խօսողս, մեծ հակաճառողս, փառասէր վարդապետս: Բայց ո՞ է նա՝ որ հաճիցի խոնարհիլ, և առ ոչ ինչ համարի նստիլ ստորադոյն 'ի դպրոցս քրիստոնէից, և ուսանել միայն 'ի «ՆՄԱՆԷ՝ Որ միշտն էր հեզ և խոնարհ: Ունիմք զմեծամեծ և զգեղեցիկ տերևս 'ի վերայ ներկայ ծառոյն խոստովանութեան՝ սիրոյ, բայց ո՞ւր է պտուղն: Թզենին՝ զոր անէծ «Քրիստոս, հրաշագեղ տե-

սիրտ տայր 'ի հեռաստանէ, բայց և
ընդ ամենայն ժամանակն ոչ ինչ
կայր 'ի նմա: Շատ խիկ էր նմա լի-
նել փուշ և տատասկ. որոյ վախճան
տոչորումն էր:

5. Նման այնորիկ՝ այս ոչ է
ճանապարհ երջանիկն լինելութեան
'ի թշուառ աշխարհի այսմիկ. թէ-
պէտև կեղծիցես խօսել զնմանէ:
Նիստ 'ի սորին տեղւոջ և սպա-
սեա՛ Քրիստոսի բարձրացուցանել
զքեզ: Յորժամ փեսայն գայցէ
'ի վեր կալցէ զքեզ՝ եթէ պատ-
շաճ համարիցի. և եթէ ոչ առնի-
ցէ, դեռ ևս 'ի յարմարաւոր տե-
ղւոջ կաս: Մ՛իայն խնդրեա՛ զերեսս
Նորա. միայն խնդրեա՛ զսէրն. միայն
վայելեա՛ց զզօրութիւնն. և այլ-ք
ամենայն՝ որք զհետ եկեսցեն, բարի

լինելոց են քեզ։ Ոչ ոք նախանձի
քեզ ՚ի խոնարհ վիճակի քում. կա-
րի շատ թշուառութիւնք ՚ի վերայ
գան մարդկան ՚ի նախանձուէ։ Ոչ
ոք նախատէ զքեզ վասն խոնար-
հութեան սրտի և կենաց. Յորժամ
ոչ նախատէ զքեզ, ոչ դատապար-
տէ զքեզ խիղճ սիրտ քո։ Այլ սորին
հակառակն՝ գտանելոց ես զշուշանս
հովտաց ծաղկեալս առ քեզ ա-
մենայն ժամ զանուշունս բուրմանց
խւրհանց. որք են թէպէտ և ստո-
րադոյնք, բայց են և քաղցրագոյնք
՚ի ծաղկանց։ Մանուշակն կախէ
զամօթխած գլուխ իւր, և ծածկէ
զգոյն իւր և զանուշահոտութիւն
ընդ տերևովքն։ Տես Եսա. 57-15.
Մատթ. 18—4. Յակ. 4-6. Ա.
Պետրոս 5-5.

6 Բայց թէ ասիցէ ոք, յորժ տառապեալ եմ յարտաքին վիճակի իմում, և ունիմ զթշուառ բաղդ յաշխարհի. Հազիւ թէ կարեմ պահպանել զընտանիս իմ յայսմ դժնդակ ժամանակի. և գրեթէ ՚ի վերջին կէտ չքաւորութեան սովալլուկ սատակիմ: Գործ չունիմ, տուր և առ՝ վատթար, պաշտօնս՝ դժնդակ, հիւանդութիւն՝ մեծ. և բարեկամս՝ ոչ և մի: Բարւո՛ք եղբայր իմ և քոյր, Տէրն ուղիղ տեսանէ այդմ այդպէս լինել: Եւ այս պարտի լինել առաջին ամենայն փաստից ՚ի բաւարացուցանել զքրիստոնեայն: Բայց ոչ տեսանես դու ՚ի մէջ այսորիկ, զի կոչեցեալ ես գործել զհաւատն տուեալ քեզ: Թէ՝ պարտ լիցես դու առնել խո-

նորհ, առաւել աղօթարար, առա-
ւել և ապաստան օգնութեան երկ-
նային Հօր քում։ Յիշեա՛ զի ոչ ես
չարչարեալ վասն ոչընչի։ Տէրն
ոչ հաճի տրտմութեան քում. կարէ
նա առաքել քեզ զհազար կամ ըզ-
տասն հազարս ոսկւոյ՝ 'ի միում ժա-
մու, եթէ գումար այնպիսի՝ բարիս
առնիցէ քեզ։ Կարէ նա ստեղծա-
նել զմանանա 'ի կերակուր զքեզ՝
որպէս արարն վասն Իսրայէլացւոց.
կարէ խափանել զհանդերձս քո 'ի
մաշելոյ, զանձն քո՝ 'ի հիւանդութե-
նէ. և կարէ միանգամայն լցուցանել
զքեզ այն ամենայն գեղեցիկ և երևե-
լի իրօք՝ զորս արժան է։ Կարէ յա-
րուցանել զքեզ 'ի բարձրագոյն աշ-
տարակ անդր բարեբաստութեան,
և յետ այսր ամենայնի՝ եթէ թողու-

ցու զքեզ անդր՝ անկանելոյ ես անտի ՚ի վայր և բեկելոյ զպարանոց քո յապականութիւն, Ո՛չ, գիտէ նա զխիստ քո առաւել քան զքեզ։ Դու չես՝ որ զբաղիլ պիտիս այսպիսի իրօք. ունիս դու զբնաւորութի̃ կամ զհոգի ինչ ՚ի խոնարհ հարկանելի և ՚ի գետին արկանելի. և այս միջոց է՝ զոր Աստուած ՚ի գործ դնէ յայդ վաղճան։ Մեղուք քո են խրատք նորա. և ամենայն կարգեալ վասն բարութեան քո։ Զիք և մին ՚ի նոցանէ առաւել ծանր կամ երկար՝ որպէս կարծես դու թէ իցեն։ Բայց դատաստան և ցանկութիւն քո պարտին հնազանդել նմայն, ապա թէ ոչ՝ ունիցիս զնոսա տակաւին ևս երկար և մեծագոյն Ասէ քեզ. դու ևս պարտիս հաւատալ

նմին՝ որ զամենայն գործէ ընդ մի-
մեանս վասն բարուն ժողովրդեան ։
Առնե՞ն ամենեքեան կամ՝ իւրաքան-
չիւր արարած յիւրում տեսակի․
չէ՞ անդ չոր․-ո՛չ․-ո՛չ և մի, ուրեմն
Աստուած ստախոս է։ Լինիցի՞ նա
ստախոս վասն քո․ ո՛չ զի՞նչ հոյհոյ-
անք լիցեն այս յանհաւատութենէ,
որ մոլորեցուցանէ զմարդ, թէ կամ
Աստուած լիցէ երկու, և կամ լիցէ
ստախոս ։ Բայց ես այժմ սովա-
մահ կորնչիմ աստ ։ Գո՛ւ Քրիս-
տոնեայ, և սովամահ կորնչիս․ սուտ
ասնես զնա ։ Եթէ դու Քրիստո-
նեայ ես՝ ագռաւք իսկ կերակրելոց
են զքեզ՝ մինչ չև սովամահ եղեալ
լիցես ։ Քննեա՛ զքեզ ։ Անձն հա-
ւատս 'ի խոստումն Քրիստոսի․
տես (Մատթ․ 6․ 33-21-23․ Յովհ․

14· 13-14 ։ 1 Յովհ · 5-14 ։ Բ· Կոր· 9·8 ։) Այսոքիկ են փորձեալ խոստմունքն ։ Հաւատով ի գործ ածես զմիջնորդութիւնս նախախնամութեան նորա ։ Եթէ ունիս և ունիս, թէպէտև բերիցիս ցպատուիկ մի հացի, ոչ երբէք կարօտիցիս միում։ Ո՛ւ զներկայ պատուիկն և հայեա՛ց յերկինս ընդ օրհնութիւն վաստակոց վասն այլում։ Նոր ոմն երկար ժամանակաւ յառաջ քան զքեզ, որ ասաց թէ՝ աղքատ իցէ և տնանկ, բայց ոչ մնաց անդէր, Տէր, (ասաց նա) հոգայ վասն իմ, քանի՛ որ տառապեալ աղքատ՝ տակաւին Տէր խնամածու էր նորա · այո, Տէրն հոգաց զաղքատութենէ նորա և զկարօտութենէն՝ դիւրամամբ տալով նմա հայել

յի՛նքն կոյս և միալ միայն բարե-
րարութեան Տեառն իւրոյ : Թո-
ղեալ զայս , բնութիւն ճշմարիտ
հաւատոյ է լինել գործունեայ :
Եւ հաւատն 'ի խոստումն Քրիս-
տոսի առնէ զքեզ փութաջան 'ի
կիրառութիւն միջոցացդ : Աստու-
ած օրհնէ զնոսա 'ի մխիթարու-
թիւն քո 'ի վախճանի : Ընկեա՛
ուրեմն զհոգս քո 'ի Տէր , որ հոգայ
վասն քո . և գտանիցես : Ուր թէ-
պէտ առիւծք կարօտին և համբե-
րին քաղցու , դու ոչ կարօտիս ո՛ր և
իցէ իրաց՝ որ բարին իցէ վասն քո :
Գոն բազում իրք բարի յինքեանս.
որք ոչ են լինելոց բարիք քեզ ,
զի 'ի վայելչութիւնս բարեաց , այ-
նոքիկ միայն են բարիք՝ զորս Տէրն
հաճիցի առնել զնոսա այնպիսիս .

Յուսամ ՚ի Տէր, բնակեմ յերկրի, որ է՝ ապաւինեամ ՚ի խոստմունսն Աստուծոյ, յորս եդ զքեզ ՚ի ներկայ վիճակի քումն նախախնամութեամբն իւրով, և արդարև կերակրեսցիս, (Սս. 5-13։ 7)

Բայց զգո՛յշ լեր զի մի՛ ցանկանայցես երկրային իրաց վասն սոցին իսկ պատճառաց. կամ վասն միայն հեշտութեանցն՝ զոր յուսաս գտանել ՚ի նոսա։ Եթէ առնիցես՝ Տէրն՝ վասն սիրոյ իւրոյ առնէ զամենայն իւրաստեղծ մխիթարութիւնս դառնաճաշակս քեզ։ Այս է իմաստութիւն շնորհաց՝ ժառանգել զամենայն ինչ՝ որպէս ուխտեալ ողորմութիւնս արարեալս քեզ յերկնաւոր Հօրէն՝ վասն բարձրագոյն խորհրդոց. քան զոր մարմնական

աչք կարին տեսանել. մանաւանդ թէ՝ և առնել զսիրտ քո երկնային՝ որպէս և առաջնորդել զքեզ յերկինս: Յորժամ այս բնութիւն գործիցէ ՚ի մէջ ունակութեան և կազմութեան հոգւոյն, յորժամ ամենայն արտաքինք յարգարին և կազմին, թէպէտև անհաճոյք և ձանձրացուցիչք լիցին զգայութեան: Եթէ դու վայելլիցես զամենայն ինչ ընդ Աստուծոյ, և գտանիցես թէ ամենայն նշանք բարութեան նորա ձգեն զսիրտ քո առ ինքն՝ և ունիս բաւականին՝ և բաւական ՚ի նմանէ: Բայց եթէ այլազգ, որպէս կարես ակն կալնուլ թէ ոչ առաքիցէ քեզ զդեղն դառնաճաշակ: Եթէ վասն հիւանդութեանն դարմանելոյ և նեխելոյ ՚ի հոգւոջ քում, ո՞չ իցէ այն

վասն բարութեան քո՝ եթէ որ և լինիցի ։ Մ՛ին լացցէ՝ եթէ կորուսեալ եմ զայս կամ զայն սիրելի բարեկամ կամ սիրելի զաւակ , զմխիթարութիւն կենաց իմոց ։ և չիցեն այո՞ք բաւականք վասն թշուառու՟ն ։ Քրիստոնեա՞յք էին նոքա արդարև , ապա զիա՞րդ այնպէս յիմար իցես , որ նախանձիս ընդ լի վայելս երջանկութեան նոցա ։- Ի վիճակի անհաւատութեա՞ն էին , զիա՞րդ ապա իշխես յայդմ վիճակի , տրտնջել զմատակարարութենէն Աստուծոյ ։ ո՞չ այն առնիցէ զարդարութիւն վասն նոցա և քո ինքեան ։ և յետ ամենայնի՝ զի՞նչ օգտիցէ քեզ անհաւատ քրթմնջութիւն քո ։ ո՞ր ամենևին է մեղաւոր և անօգուտ ։ Վաղների արդարև բնութեանս ։

քոյց շնորհացն պարտի ցամաքե-
ցուցանել զնոսա զամենայն. և յԱս-
տուած հանգուցանել զսիրտ քո։
(Տես Եսա. 26, 17։ Ծննդ. 18, 25։
Հռոմ. 8 38. 1 Կորնթ 3. 22, 15-35
Փիլիպ. 1-21։ Յայտ. 2, 1, 4 9։

9 Այլք գանգատիցին թէ՝ աւա՜ղ
ունիմ զվատթար այր, կամ զվատ-
թար կին. զանգութ ծնողս՝ կամ
զանհնազանդ որդիս. և մա՞րթ ինչ
իցէ ինձ երջանիկ լինել։ Բայց բա-
րի, զթած և կամ հնազանդ լեալ
իցես դու, որպէս պարտ էիր գոլ.
չի՞ք վիրպակ ինչ՚ի քո կողմանէ.
չտա՞ս պատճառ ինձ վարուք իսկ
քովք՝ յարուցանելոյ կամ պահե-
լոյ զթիւր արարս այլոց, եթէ այն-
պէս արարեալ իցես՝ սակաւս ունիս
իրաւունս գանգատելոյ, Եթէ ոչ

արարեր, տո՛ւր զբաղդն ամենայն հեշտութեամբ՝ համբերութեամբ և սիրով, և զկեանս իմ փոխանակ կենաց քոց, եթէ ոչ կամ Շնորհք գտցեն զյաղթութեանն՝ և կամ նախախնամութիւնն յառաջ ժամանեսցէ ի փրկութիւն քո։ Յիշեա՛ զի բերար դու յայսպիսի փորձութիւնս՝ միայն զի կարիցես զետեղ առաւելապէս զսիրտ քո․ և քաջ ապաւինեցես միայն յԱստուած կենդանի․ զի յորժամ բերիցիս առ նա, յամենայն ժամուրախ առնիցէ զքեզ։ Սաղմ․ 27, 10։ 2 Սամ․ 2 3, 5։

10 Մ՛իւսն ասիցէ թէ՝ ոչ եմ փորձեալ այսպիսի եղանակաւ․ այլ ի կիր արկանեմ զամենայն միջնորդութիւնս շնորհաց․ հաստատուն

կամ 'ի պատուիրանսն , ընթանամ ընդ բովանդակ քաղաքն լսել մեծագոյն պաշտօնէից բանին Աստուծոյ , բայց տակաւին ոչ կարեմ գըտանել զմխիթարութիւն ինչ , ոչ զհանգստութիւն և ոչ զքաջալերութիւն 'ի հոգի իմ . Այս է հասարակ պատճառ , զի Բազումք գոն որ առնեն զմիջնորդութիւնսն՝ վախճան , որք հանգչին 'ի նոսա՝ և կարծեն թէ ամենաբարի իմն իցէ նոցա գտանել առ ժողովրդեան ուրեք : Ինքնարդար սիրտք մեր ապաստան գնան առ ո և իցէ՝ թողեալ զՔրիստոս . և մեք կարող եմք կարծել թէ ոչ գոյ վտանգ ինչ յինքնարդարութեան՝ յաւետարանին պարզապէս քարոզեալ : Բայց արդարև գոյ անդր , սիրտք

մեր բնաւորապէս այնպէս ինք-
նարդարք են․ ստորագոյն խոնար-
հութեամբ մերովք վասն մեղաց՝ և
մերձաւորագոյն ժամանմամբս առ
Քրիստոս՝ բովանդակապէս ճա-
շակէին զանխծեալ սրմամն հը-
պարտութեան, եթէ Տէր ոչ ցու-
ցանէր մեզ թէ այս ամենայն իրք
անպիտանք են՝ և բաժանեալք
յիւրմէ․ և թէ պարտ էր մեզ գնալ
առ նա մերկք՝ վասն հանդերձին
շնորհաց․ և քաղցեալք՝ վասն կե-
րակրոյն շնորհաց ։ Ոմանք մեր
պարտին դատարկանալ յառաջա-
գոյն, զի լնանիցին․ Ես մինչ ունի-
ցիմք զդիրդ անձնարդարութեան
մերոյ․ ոչ կարեմք խնկապէս ճա-
շակել զքաղցր անապակն արդա-
րութեան Քրիստոսի ։ Սատանայ

միշտ ջանայր 'ի տաճարին . ցսա՛ որ
հալեցաւ 'ի բանէն՝ կամ յառանձին
աղօթից , և կամ յօգնեալ եղև յայլ
իմն պարտիս՝ ասէ . զի՞նչ շնորհ ,
զի՞նչ գիտութիւն , զինչ ժառան-
գութիւն , յորս այժմ բարձրացեալ
ես դու 'ի շնորհս Աստուծոյ : Բայց
ասա՛ դու , երթ յետս իմ սատանայ .
զի Աստուած միայն փառաւորեսցի .
ոչ ինձ , ո՛չ ինև , բայց միայն նմա
լիցին ամենայն փառք : Եթէ ա-
պաւինիս 'ի միջնորդսդ՝ և ոչ յԱս-
տուած միջնորդացն , փութով զը-
տանիս զնոսա գոսացեալս ոգւոյ
քում : Եթէ հայեցիս առ պաշտօ-
նեայսն , և ոչ 'ի ձեռն պաշտօնէից
'ի Տէր անդր նոցա , իմա՛ 'ի մի . . ս ան-
ձին քում , զի (նման բարեկամացն
Յովբայ ) թշուառական մխիթա-

րիչք են ամենիքն նոքա · սիրեմ
զնոսա վասն Քրիստոսի, մեծարեմ
զնոսա վասն բարձրագոյն գործոց
նոցա , բայց մի՛ յենուլ ՚ի նոսա ։
Ո՛ ի մարդիկք են որպէս զքեզ · ոչ
կարեն զայլ բարիս առնել քեզ՞
քան զոր Տէրն սահմանէ · բաց ին-
քեանց նմանք են գործեաց նուա-
գարանի և կարօտին մատին Աստու-
ծոյ կենդանւոյ ՚ի տալ իւրեանց զու-
ղեղ ձայն , և ՚ի պահել զնոսա ՚ի
միաբանութեան ։ Վասն լինելոյ
երջանիկ և հաստատեալ՝ պարտիս
հայել անդր քան զպատկերս աղքատ
արարածս , (որպէս և ենն նոքա՝
և այլ ամենայն ստեղծուածք ,) առ
Տէր նոցա Քրիստոս ։ Կեաց ՚ի
նմա՝ և լինիցիս հանդիստ · ապաւի-
նեաց ՚ի նա միայն պարզ մտօք · և

ոչ կարօտիս երջանկութեան ։ Եսա ․ 26 , 3։ Գործ 24 , 15։ 1 Կորն ․ 3․ լման , Կողոս 3, 2։

11 Բազումք կոլուսանեն զբազումս ՚ի մխիթարութեանց շնորհաց՝ վճարանութեամբ ընդ իրեարս , բայց մի ինչ է հակաճառել վասն շնորհաց , և միւս այլ՝ վիճել շնորհօք ։ Եթէ մարդ ոք վիճիցէ վասն շահելոյ զփաստն կամ ցուցանելոյ զինքն , թէպէտև լիցի այն ՚ի վերայ հաստատագոյն մասին հաւատոյ՝ ոչ գտանէ զմխիթարութիւն ինչ յԱստուծոյ և ոչ շնորհըս ինչ ՚ի Տեառնէ , ‘Նկրտեմ միայն վասն փառացն Աստուծոյ , և յայժամ ջերմեռանդութեամբ նկրտեցեր ։ Լինիցիս անարգ յաչքո , այնինչ դիտիցես բարձր առ-

նել զճշմարտութիւնն յաչս այ-
լոց ։ Եթէ մարդիկ շողոքորթիցեն
կամ վիճիցեն սրտմտութեամբ և
ամբարհաւաճութեամբ , բարեգոյն
լիցի քեզ ապաստան դնել առ
Տէր քո . և ( ըստ Յովհաննու՝ )
անդորրութեամբ ուսանիլ ի վե-
րայ լանջացն Յիսուսի . և առա-
ւել երջանկութիւն գտանել կարես
վայրկենական միաբանութեամբ
ընդ նմա , քան լսելով կամ շահե-
լով զբովանդակ ապացոյցս աշխար-
հի ։ Տիմ . 6 , 5 ։ 2 Տիմ . 2 14 , 24 ։
1 Պետ ։ 3 15 ։

12 , Բայց այլք նեղեն զքեզ
վասն Քրիստոսի ։ Տես զի՛ իցէ այդ
ճշմարտապէս վասն Քրիստոսի , և
յանձամբերկրեաց և առաւել ևս
ուրախ լեր . զի այս է պատիւ իմն՝

որ հազիւ պատահի յաւուրս մեր ։ Առաքեալք, Մարգարէք եւ Մարտիրոսք վայելեցին զայդ յառաջ քան զքեզ ։ Գտանիցես, զի որպէս ներողութիւնքն առաւելուն վասն Քրիստոսի՝ մխիթարութիւնքն եւս առաւելուն նովաւ ։ Ոչ ոք 'ի հաւատացելոց տրտմութեամբ հայեցաւ յետս ընդ այսպէս հալածանս, զի միշտ կացուցանէ նա զճշմարտութիւնն ։ Յորժամ հայր եւ մայր թողուցուն զմեզ, յորժամ ամենայն մտերիմ բարեկամք մեր արտաքսեսցեն զմեզ վասն Քրիստոսի, նա ընկալնու զմեզ, տայ մեզ առաւել ճշմարիտ մխիթարութիւնս 'ի միում ժամու՝ քան թէ հազարք 'ի նոցանէ կարիցեն առնել 'ի բոլոր կեանս իւրեանց ։ Տես Ղուկ. 28.

27, 30: Փիլ. 1, 29: 2 Տիմ. 3, 12: 2 Պետ. 3, 14: Հռոմ. 6, 18, 2 Կոր. 1, 5 7:

13. 'Ի ժամանակս հասարակաց խռովութեան և նեղութեան, յորժամ թագաւորութիւնք երկրի շարժիցին, և աշխարհ ամենայն երևիցի 'ի խռովութեան, Յիսուս է ընդ ժողովրդեան իւրում, ծածկել ըզնոսա 'ի ձեռին իւրում, կամ առնել զնոսա երևել փառաւորս շնորհօք իւրովք: Հաւատացեա՛լ, ոչ մերձեսցի չարն քեզ, և ոչ վիշտ ինչ հարցէ զընակութիւն քո: Ոչ կըրեսցես դու, բայց զոր ինչ առնելոց իցէ քեզ բարիս: Յամենայնի արտօնութիւն է քո առնուլ զխաղաղութիւն 'ի Քրիստոսէ՝ զոր աշխարհս ոչ կարէ տալ կամ 'ի բաց

առնուլ։ Հառաւիղ ինչ է յաղ-
թութեան հաւատոյ, յաղթել աշ-
խարհի և ամենայն նեղութեանց՝
որք յառնեն ՚ի վերայ դորա ։ Մի՛
զարհուրիր. զի դու ես մասն ժա-
ռանգութեան Աստուծոյ. յոր դեն
ոչ կարէ հուպ մատչիլ. և եթէ
դեն անզօր իցէ՝ որքան անզօրագոյն
մարդն իցէ ։ Թո՛ղ դժոխք աղաղա-
կեսցեն, և երկիր շարժեսցի, վէմն
հաստատեալ է, խաղաղութիւն
քո շինեալ է ՚ի վերայ դորա, և ա-
պահով կայ. անուն քո գրեալ յեր-
կինս՝ ոչ կարէ ջնջել. և Աստու-
ած տացէ քեզ զամենայն երջանկու-
թիւն ընդ գնացս քո դէպ անդր,
որպէս սեփհական է բարութեան քո
և փառաւորութեան իսկ նորա ։
Եւ առաւելոյ քան զայս ո՛վ, բայց

եթէ անմիան ցանկանայցէ ։ Տես Սաղմ. 27, 3, 4։ Մատ. 24, 6։ Մրկ, 13, 7։ Ղուկ. 21, 7։ Եզեկ. 3, 27։

14 'Ի ժամու մահուան երջանկութիւն քո՝ որպէս ցուցանելոց եմ քեզ, լինիցի իբրև կատարեալ։ Սիրելի՜ Քրիստոնեայ, Տէր ոչ թողու, ոչ կարէ թողուլ զքեզ յայնժամ։ Անցուցանէ զքեզ անվնաս ի վերայ հոսանացն Յորդանանու. և գուցէ մխիթարութեամբ, (եթէ իցէ այն վասն փառաց իւրոց,) վերջապէս գտանիցես զբաւական մխիթարութիւն 'ի միւս կողմն ։ Ո՜ որպիսի՜ ողորմած Տէր ունիցիմք մեք, մխիթարութիւն ի յաջողութեան, մխիթարութիւն ի նեղութեան. մխիթարութիւն 'ի

հիւանդութեան, երջանկութիւն 'ի տանջանս, բերկրութիւն 'ի հալածանս, խաղաղութիւն 'ի խռովութեան, հարստութիւն 'ի չքաւորութեան, փրկութիւն 'ի մէջ տագնապաց, յոյս 'ի խաւարի, կեանք և ուրախութիւն 'ի մահու. և երկնիք իսկ գլխովին առ ամենայն յաւիտենականութիւն։ Ո՛վ զի՛նչ տեսակ սիրոյ իցէ այս. ա՜յս իմն իցէ, գոլ հաւատացեալ, ա՛յս լինել Քրիստոնեայ արդարև. ո՛ դու միամիտ կոյր աշխարհ անգոսնիցես և ծիծաղեսցիս ընդ Քրիստոնեայս. որչափ առաւել պատճառք իցեն նորա ողորմելոյ և գթալոյ 'ի քեզ։

15 Որպէս երևի զի կեանք Քրիստոնէին իցեն միայն կեանք երջանիկ, և թէ վասնայսորիկ՝ մե-

միայն ճանապարհ երջանկութեան ՚ի թշուառ աշխարհի այսորիկ է լինել մի ՚ի նոցանէ ։ Երևելի նաև՝ զի կեանք ՚Քրիստոնէից լինեն արտաքոյ անձանց իւրեանց և ՚ի վերոյ քան զալարածս, վասն այսմ երջանկութեան, և թէ այդ լիցէ օգուտ ազատութիւն նոցա խնդրել զամենայն զոր ինչ պիտոյ լիցէ ինքեանց և գտանել զոր միանգամ խնդրեն ՚ի ՚Քրիստոս Յիսուս միայն ։ Նա է գլուխ զօրութեան և իմաստութեան նոցա , Նա է արդարութիւն և հաստատութիւն նոցա ։ Ունին նոքա զօրութիւն ՚ի նմա և նովաւ ։ Նա է պահապան և առաջնորդ նոցա , յոյս և ամենայն ինչ նոցա ։ Համեմատութեամբ ապաւինիցին ՚ի նա՝ գտանեն զկամս փա-

փոգելոյ, և զկարողութիւն առնելոյ զոր ինչ և ուղիղ իցէ կամաց նորա. յինքն պարփակելով և զնոցայն, կամ կամաց նոցա հեզութեամբ յանձն լինելով նորայում է մի 'ի մեծագոյն սեանց երջանկութեան իւրեանց։ Որպէս՝ եթէ նա կամիցի նոցա զչքաւորութիւն, բաւարարեալք իցեն. քանզի այդ իսկ են կամք նորա և բարեգոյն նախախնամութիւն վասն ինքեանց։ Աւթեր սրտի մտօք օրհնեաց զԱստուած վասն աղքատութեան իւրոյ։ Եւ են բազում օրհնութիւնք 'ի նմին, որոց վասն խղճալի Սուրբքն գոհացին զԱստուծոյ յաւուր միում. թէպէտև մարմնաւոր աշխարհ ոչ կարիցէ հասու լինել այնց։

Քաղցր բան էր առնն բարւոյ՝ թէ Օրհնեսցո՛ւք զԱստուած յայսմ հետէ՝ առաւելապէս վասն տառապանաց և տանջանաց մերոց, և վասն հիւանդութեանց և տրտմութեանց մերոց, վասն անձկութեանցս ՚ի խոնարհ, քան թէ վասն ամենայն չքնաղ և հաճելի իրաց՝ զորս վայելեմք յաշխարհի աստ՝ միանգամայն առեալ։ Յանձնումն, իմ սիրելի Ճանապարհորդակից, աղատութիւն է քո, շահ և պարտիք, որպէս և իմ իսկ։ Քաջալերեա՛ց բարեկամ իմ. զի փոքր մի ևս՝ ահա հասանիցեմք ՚ի վախճան Ճանապարհիս մերոյ, Տամ քեզ զձեռն իմ և զսիրտս, թող ինձ դու նմանապէս ունել զքոյդ։ Եթէ պանդուխտ իցեմք՝ թող լիցուք ուրախ

պանդուխտք․ Ուրախ լիցուք յԱս-
տուած նժդեհաց ։ Պարծեալ
ասեմ, ուրախ լիցուք ։ Եթէ աշ-
խարհ տխուր իցէ և ցաւագին ,
պատճառս ունի․ բայց ընդէ՞ր մեք
լինիցիմք տխրալիցք , ունիմք զհա-
զար խոստմունս վասն աշխարհիս
այսորիկ , և ամենայն երկինք երկ-
նից առաջի մեր են ։ «Քրիստոս է
ընդ մեզ , և մեք գնամք առ Աս-
տուած նորա , և առ Աստուած մեր ։
Եթէ հանդերձք մեր կախեալք
գետնաքարշ զհետ ձգիցին մեր ,
թող ընդ մէջս պնդեսցուք զնոսա ։
Այլով բանիւ․ եթէ սիրտք մեր
(նման կնոջն Ղովտայ ,) դանդաղ
հայեցուածս ձգեսցեն յետս ընդ
աշխարհ , սանձեսցուք զնոսա այ-
սու խորհրդով․ թէ Աստուած է

միայն զօրութիւն սրտից մերոց , և ժառանգութիւն մեր յաւիտենական ։ Հաւատացուք զամենայն ՚ի ձեռս նորա , և Ճշմարտիւ ընկեցին անվտանգ.ք , Եթէ Տէր տայցէ մեզ զերկինս իւր , խնայեսցէ մեզ արգեօք զդուզնաքեայ պատառս հացի ՚ի տանել զմեզ անդր ։ Եթէ կարեցեմք հաւատալ յԱստուած վասն հոգւոց մերոց , ո՞չ կարեմք ևս առաւել ապաւինել ՚ի նա վասն մարմնոց մերոց ։ Ոչ ինչ եղանակաւ մարթ է շարժել զյոյս մի առանց նորա․ և ըստորումն ոչ կարեմք տեսանել զտնանափոխ միճանապարհին՝ որ առաջի կայ մեր , առաւել իմաստութիւն և մխիթարութիւն մեր է՝ յառաջ գնալ հաւատով ՝ և կեալ հաւատով ՚ի նա ։ Եւ ո՞րպիսի օրհ-

նեալ կեանք լցէ այս , զլմրդ փա-
ռաւոր ։ Մարմին խաչեալ , աշ-
խարհ ընդ ոտիւք մերովք , և դեռ
ընկեցեալ 'ի վայր , մահ յաղթա-
հարեալ , և Քրիստոս միայն բար-
ձրացեալ ։ Քրիստոնեայդ՝ Քրիս-
տոնեայդ , որպիսի է սիրտ քո 'ի քեզ.
չէ՞ք զգացուած երջանկութեն յայսմ
ամենայնի ․ ո՞չ բարձրագոյն բերկ-
րութիւն ․ ո՞չ յափշտակիչ տեսու-
թիւն ․ ո՞չ կարեմ մեղանչել քեզ տա-
րակուսելովս զնոքիմբք , տո՛ւր ինձ
զձեռն քո Եղբա՛յր իմ կամ Քո՛յր , և
այնպէս յառաջ ժամանեսցուք ցու-
ցանել ամենեցուն շուրջ զմեօք՝ թէ
այս լցէ ճանապարհն երջանկութեն
'ի թշուառ աշխարհի յայսմիկ ։ —

# ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՔ

---

Ա. Սկզբունք պիտանացուք վասն ստացման յաւիտենական փրկութեան ։

Բ. Բնաւորութիւն հարկաւոր վասն ըստացման յաւիտենական փրկութեան ։

Գ. Զգուշաւոր քննութիւն անձին յամենայն առաւօտու ։

Դ. Նոյն՝ յամենայն երեկոյի ։

Ե. Կանոնք սրբելոյ զօր Տեառն ։

---

# ԵՐԿՆԱՅԻՆ ՃԱՒԻՂ

## ԳԼՈՒԽ, Ա.

*Սկզբունք պիտանայուք վասն ստացման յաւիտենական փրկութեան ․*

1 ԱՆՇՈՒՇՏ հաւատամ թէ լիցէ
մեծ և փառաւոր Աստուած ումն ․
և թէ Յիսուս Քրիստոս լիցէ միա-
ծին որդին Աստուծոյ , և մի միայն
փրկիչ մեղաւորաց ։ Թէ Աստուա-
ծաշունչն լիցէ ճշմարիտ բան Աստու-
ծոյ․ եթէ կայցեն երկինք մի՝ և
դժոխք մի․ և թէ ունիս դու ՚ի քեզ
զպատուական և զանմահ հոգի , որ
պարտի կալ և մնալ ՚ի մին կամ
միւսն՝ ըստ դատաստանին Աստու-
ծոյ՝ ընդ ամենայն յաւիտեանս ։
2 Վստահ լեր քեզէն թէ վեր-
ջին վճիռն անցցի զքև ըստ լինե-

լոյ գործոց քոց բարի՝ կամ չար ՚ի կեանս յայսմիկ ։ Թէ՝ կարի դըժուարին իմն է երանել յերկինս , բայց և՝ թէ ճանապարհն առ դըժոխս ընդարձակ է և դիւրին ։ Յամենայն ժամ յիշեա , զի ունիս զխիստ նենգաւոր ՚ի քեզ . չար դևն մերձ ՚ի քեզ , և թէ հազար թակարթ և որգելք պատին զքև յամենայն կողմանց ։ Սատան որոյ ասեմ , ժամանակ իմ կարճատև է , գործ իմ մեծ . և կարողութիւն իմ նուաղ ։

5 Խորհեաց զի փառք երկնից արժանիք են ամենայն խնամոց և աշխատութեանց քոց , թէ դժոխքն ահագին իցէ մինչ առաւել առնել քեզ զփախուստն ՚ի նմանէ ամենայն արթնութեամբ՝ եռանդեամբ

և երազութեամբ. և թէ բարեգոյն եւս էր քեզ եթէ ոչ երբէք ծնեալ էիր, քան թէ մեռանիլ 'ի մէջ քո՝ և կորնչիլ յաւիտեան: Խորհեա՛ որպիսի՛ սոսկալի աղաղակ հանելոց իցէ հոգի քո, եթէ գնասցէ այդ արտաքս 'ի մարմնոյ քումմէ յանշիջանելի բորբոքումն: Մինայն աշխատք աշխարհիս այսորիկ ո՛չ կարեն առնել զոք թշուառական, որ գնայ յերկինս Ճանապարհաւ արդարութե՛ն: Ո՛րքան քաղցր լինիցի մտանել 'ի փառաւոր տեղիս յանդորդ և աղքատին հղէ աստի, 'ի ծովէս վտանգից և տխրութեանց 'ի յերկինս ինչ խաղաղ, հանգիստ, և առատ: Մինայն հարստութիւնք և պատիւք և փափկութիւնք աստ՝ ո՛չ կարեն երջանկա-

ցուցանել զմարդն՝ որ երթայ 'ի գժոխս ։ — Որքա՜ն սոսկալի եղիցին նոցա դժոխք․ ուր վատնեալք լցեն զկեանս իւրեանց 'ի փափկութիւնս, ոչ միայն 'ի փոխելն զապարանս ինչ վասն խաւար և լռին գերեզմանի, կամ՝ քնքուշ պաճուճանս վասն որդանց և նեխութեանց, ունել զքաղցր երգս ներդաշնակութեան դարձուցեալս 'ի դժնդակ աղաղակս․ զհոյակապ սենեակս, զհաճելի զբօսանս, զճոխ պաճուճանս, և զզուարճալի գեղեցկութիւնս 'ի կապանս խաւարինս և 'ի վառ լիճս հրոյ և ծծմբոյ ։ —

4 Մտադիւ խորհեաց 'ի քեզ թէ կարիցեմ ես տակաւին հասանել յերկինս և փախչել յերկիւղալից տանջանաց և 'ի չարչարանացն դժո-

խոց ։ Եթէ գտայց ՚ի փառսն՝ զո՛ր-
պիսի Աստուած վայելիցեմ յաւի-
տեան ։ Բայց եթէ ՚ի վերջոյ եր-
թայցեմ ՚ի դժոխս՝ տոկա՞լ կարիցեմ
ընդ մեծութեամբ վրէժխնդրութե՜
Աստուծոյ ։ Բարւո՛ք , տակաւին
գոյ անդր յոյս , սիրտն Աստուծոյ ,
դուռն շնորհաց , և դուռն երկնից
տակաւին բաց են ․ ո՞րպէս տայցեն
դատապարտեալքն ՚ի դժոխս՝ զհա-
զարս աշխարհաց , եթէ ունիցին նո-
քա տա՛լ ընդ միումն պատեհուե՜ ,
Երկինք , Շնորհք , և Քրիստոս
ընծայլին ․ և ժպրհիցե՞մ մերժել զա-
մենայն ։ Կարիցե՞մ յանդգնել ՚ի յա-
ւիտենական կործանումն հոգւոյ և
մարմնոյ ․ եթէ վրիպիցիմ ՚ի փառաց՝
դատապարտութիւն իմ առ դուրս
կայ ինձ ։ Կարէ՞ Աստուած սրբել

գլխ ինքն յարենէ իմմէ · սփռումն շնորհաց նորա ազատ է և հանապազորդ հաւատարիմ և ճշմարիտ , և սպանանիցեմ ինքնին զոգի իմ ։ Եթէ այսպէս , գրեալ ՚ի վերայ գերեզմանի իմում , թէ աստ ամփոփի նա՝ որ սպան զանձն իւր · և գնացող է ՚ի դժոխս , թէպէտ ՚ի մէջ ողորմութեանց , տառապանաց , և խը-
րատուց ։ —

5 ։ Ոհեզութեամբ խորհեա՛ ըզվախճան քո ՚ի քեզ ինքեան · և ասա՛ թէ զի՞նչ լիցէ ՚ի մեզ՝ որ այսպէս խանդակաթ լիցիմ նմին ։ Կարեմ գտանել զմարգարիտն երջանկութեն յաղբիւսացեալ յաշխարհէս , կարեմ ստանալ զտունս , զկալուածս , զպատիւս կամ բարեկամս՝ առ որս և նպատակիմ ։ Եւ եթէ գտանիցեմ

իսկ զնոսա՝ զինչ իցեն նոքա . ո՛չ մե-
ծագոյն իմաստութիւն իցէ ինձ գոլ
իմաստուն 'ի փրկութիւն . և բարե-
գոյնն 'ի գործոց՝ գործել զփրկու-
թիւն իմ երկիւղիւ և դողութբ :

6 Քննեմ և փորձեմ զսիրտ
քո՝ թէ իցես արդեօք 'ի հաւատս, և
զգուշութեամբ քննեմ թէ ունիս
զսէրն՝ որ է Ճշմարիտ . զհաւատն
փրկիչ հոգւոց, կործանիչ մեղաց,
և նորոգիչ կենաց: Ճշմարտապէս
եղեա՞լ իցեմ զսիրտ և զերես իմ առ
երկնաւորն Սիոն : Տեսեա՞լ իցեմ
'ի հայելւոջ աստուածային օրի-
նաց զտաղտկութիւն մեղաց իմոց,
զապականութիւն, և զդատապար-
տութիւն, և յարիւն Քրիստոսի
յանչափս մեղաւորագոյն առանց
ասութեան : Տեսանեմ 'ի Յիսուս

Քրիստոս զպեղեցկութիւն և զգե-րազանցութիւն, զլիութիւն և զամենա-բաւականութիւն ։ Ո՞չ նա առաջ-նորդն 'ի մէջ տասն հազարաց, այր և ամենևին գեղեցիկ 'ի համարման իմում ։ Յօժարութեամբ տաց զհա-զարս ոսկւոց, եթէ լինէր 'ի զօրու-թեան իմում, վասն օգտից յարեանն Քրիստոսի. այնմ քաւիչ՝ բժշկիչ և հաշտարար արեան. ամենայն ինչ դառնան ինձ 'ի կղկղանս զի կարայց զՔրիստոս՝ և գտայց 'ի նմա ։—

7 Հաւատամ զի ոչ գոյ այլ անուն 'ի ներքոյ երկնից տուեալ 'ի մար-դիկ որով ապրել կարիցեն, բայց միայն Յիսուսին Քրիստոսի. և զի՝ ամենայն շնորհք և ողորմու-թիւնք աստի կենացս և հանդեր-ձելոցն հեղանիցին առ քեզ ընդ այս

խողովակ արեան։ Ողանէր՝ զի յա-
մենայն ժամ մեղօք փակեցի դուռն
երկնից և խստացի սիրտ Աստու-
ծոյ ընդդէմ իմ. Նպատակ կա-
ցուցի անձն տրտմութեան Աստու-
ծոյ. և ամենայն անիծից Աստուա-
ծաշունչ սուրբ Գրոց. և ամենայն
տանջանաց դժոխոյ՝ եթէ կարիցեմ
յառաջ բերել ոչ միայն զիմ ա-
ւանձին, բայց նաև զթախանձ ա-
մենայն ընտանեաց իմոց. և ընդ
նոսա զամենայն զօրութիւն հրեշ-
տակաց և ամենայն գանձուց աշ-
խարհի, իբրև զոչինչ համարեցին
յանցմանց հակառակութեանս այս
մին։ Քրիստոս միայն կարէ առնել
զայդ՝ որ եկն 'ի խնդիր և 'ի փրկու-
թիւն կորուսելոյ. զի ոչ միայն կա-
րող է նա՝ բայց և կամեցող և պատ-

բաստ ՚ի փրկել զնոսա մինչև ցվեր-
ջինն՝ որք գան նովաւ առ Աստուած։
Զի՞նչ եղև նմա առնել թողուլ
զծոց հօր իւրոյ և մերկանալ զամե-
նապայծառ պատմուճան փառաց․
բայց եթէ սէր առ հոգիսն կորու-
սեալ։ Ո՞ր ետ նմա ըմպել զդառն
բաժակ սրտմտութեան հօր իւրոյ․
բայց եթէ միայն այս սէր, ո՛չ էր
այս նպատակ բարձրաձայն կոչ-
մանցն և ճոխագոյն շնորհաց։ Ա՛յ
վասն այսպիսեաց եկացն և առաքե-
ցաւ, և եկաց յորժամ անարգե-
ցաւն։ Կաց բաղխե՛մ և սպասե՛մ
ընդ երկար։ Սէր առ հոգիս մարդ-
կան ետ նմա տալ զմարմին իւր ՚ի
բեկումն և մատուցանել զայն ՚ի
մեծագոյն չարչարանս։

## ԳԼՈՒԽ Բ.

Բնաւորութիւն պիտանացու վասն ստանալոյ զյաւիտենական փրկութիւն.

1 Ո՛վ որպէս կորուսեալ, թէ-
բեւակատար, անյոյս և անօգնական
որք՝ առ ամենաբաւական և ողորմած
փրկիչն. աղաղակեմ որպէս ոք ընկղ-
մեալ ՚ի մէջ ալեաց և մրրկաց, թէ՝
Տէր փրկեա զիս. ապա թէ ո՛չ կո-
րեայց: Օ՛ննեա զձեռս, զոտս և
զկողսն, և ասա ըստ Թովմայի Աս-
տուած իմ, Տէր իմ, և փրկիչ իմ.
և ընդ Պետրոսի յառաջարկեա՛ Տէր
յո՛ երթայց. զի դու ունիս զբան
յաւիտենական կենաց. կարես օգնել
ինձ ՚ի խորին յանդնդոց աղմիս՝ ՚ի
մեղաց իմոց. և ընդ հրեղէն վիհա-
բարկութեան Աստուծոյ բերել զիս.

յօրհնեալ յանդիմանութեան և ՚ի
գթած գիրկս Աստուծոյն փառաց։
Տարածանեմ առ քեզ զտկար բա-
զուկս հաւատոյ իմոյ. ո՜վ կարկա-
ռեա առ իս զզօրաւոր բազուկ կարո-
ղութեան և ողորմութեան քո. և
արի ՚ի փրկութիւն իմ։

2 Արի որպէս խոնարհ և զղ-
ջացեալ մեղաւոր առ բարկացեալ
մեծափառութիւնն. արի գողալով
և արտասուօք յաչս քո, և խո-
րագոյն տխրութեամբ ՚ի սրտի։
Եկ որպէս անարգ յաչս Աստու-
ծոյ, հրեշտակաց և սրբոց, և մա-
նաւորապէս յաչս իսկ քո՝ ըստ մաք-
սաւորին, ոչ իշխելով բարձրացու-
ցանել զաչս քո այնքան՝ որ մինչև
յերկինս հայեցիս. բաղխեա՛ ՚ի վերայ
կրծոց քոց ասելով, Աստուած ո-

գործեմ ինձ մեղաւորիս. ըստ Հա-
րիւրապետին թէ՝ Տէր ոչ եմ ար-
ժանի՝ զի ընդ յարկաւ իմով մտցես.
կամ ըստ անառակին թէ՝ մեղուցեալ
եմ մինչև յերկինս, և ոչ եմ արժա-
նի լինել ՚ի ծառայ քո. տակաւին
դեռ զոյ անդ ըստ բաւականին
գթութիւն ՚ի սրտի հօր քում և ՚ի
գործս քո: Մեղօք բազմիցս հանի
զարիւն նոր ՚ի վիրաց քոց, թէպէ-
տև յօժարութեամբ հոսէր անտի
վասն իմ, բայց այժմ հայեցուածս
առ քեզ բեկանէ զսիրտ իմ. և ընու-
զիս աստուածային թախծանօք:

3 Արդ որպէս ապականեալ ըն-
տեղծուած մի՝ առ մաքրողական
աղբիւրն շնորհաց, խոնարհաբար
խոստովանեմ թէ ոչ Ղազարոս
վէրօք լրովք, և ոչ Յովբ կեղօքն

իւրովք նստեալ ՚ի մոխիրս , այն-
չափ զազիրք էին և գարշելիք յաչս
մարդկան , որպիսի եմ ես՝ յաղագս
ժանտախտութեան սրտի և կենաց
իմոց առաջի անարատին և սրբոյն
Աստուծոյ . և այս ապականութիւն
մեղաց զհետ գայ իմ ուր ուրեք և
երթամ , կռուի ընդ ամենայն պաշ-
տօն և վայելչութիւնս իմ . Անմա-
քուր , անմաքուր . Տէր մաքրեա՛
և սրբեա՛ զիս արեամբ քով :

4 Ե՛կ որպէս զգերեալ արա-
րած առ ամենազօր արարիչն , զան-
գատ բարձ զխստասիրտ բռնաւո-
րաց քոց՝ զմեղաց և զսատանայէ ,
և ասա՛ Տէր վճարեցեր գին բաւա-
կան . ազատեցեր զիս արեամբ քով ,
որ առաւել ծանրագին էր քան թէ
զոսկեան հազարս աշխարհաց , խորտա-

ճեամ զկապանս իմ երկաթիս ․ ազա-
տեամ զիս ի դժոխային բանտէ մե-
ղաց ։ Չունիմ իշխանութի՛ գլխոյ ․
որոյ կամ լեզուի թէ զեմբրդ ցան-
կութիւնքն զօրանան ․ թէ որպէս
կապեալ իցեմ ընդ երկրի մարմնա-
ւոր սրտիւ ․ Տէր եթէ ազատեսցես
զիս՝ Ճշմարտիւ ազատ եղէց ։

5 Եւ՛կ որպէս զխօթացեալ Հո-
գի առ ․Քրիստոս բժիշկն արժա-
նաւոր ․ աղաղակեաց թէ՝ ո՞հ չարեաց
խստութեան սրտիս ․ ո՞հ տագնապաց
վիրաւորեալ խղճիս , Տէր ահա-
ւասիկ եմ ․ թալկացեալ և մաշեալ ․
ո՞հ չիթ մի արեան քո՛ այդր կենդա-
նարար օշարակի, ուր իշխանական
բալասանի ։ Օ բազումամս յայ-
տնիկ , այո և յամենայնի կեանս
իմ իսկ՝ յորս ունէի զարինալից Հո-

սումն մեղաց, եթէ կարէի միայն մերձենալ 'ի քղանցս հանդերձից քոց՝ արդարև բժշկէի :

6 Ե՛կ որպէս վաստակեալ և ծան՞րաբեռնեալ 'ի ներքոյ բեռին մեղաց քոց՝ զի Քրիստոս տացէ հանգիստ հոգւոյ քում. ո՞չ Պօղոս յետ գանգատելոյ 'ի մէջ ծանրութեան մեղացն յաղթանակեաց 'ի Քրիստոս. այսպէս և դու կարիցես՝ եթէ մեղքս այսոքիկ՝ որք միանգամ հաճելի էին քեզ, լիցեն այժմ կարի իմն զզուելիք :

7 Ե՛կ առ Քրիստոս որպէս աղքատն գայ առ մեծատունն ոք՝ վասն ողորմութեան. եկ կողոպտեալ միանգամայն յինքնարժանաւորութենէ քումմէ, ոչ ապաւինելով յարդարութիւն քո, բայց խոս-

տովանելով զհոգեկան չքաւորու-
թիւնդ՝ ասա՛ Տեառն. թէ երբէք
քան զիս անարգ թշուառական ոք
ոչ եկն առ քեզ վասն ողորմութեան
և շնորհաց, Տէր եթէ կորեայց՝ լի-
ցի այն առ ոտս քո. ոչ հանայց
արտաքս ի դրանէ քումմէ. կարօ-
տիմ հաւատոյ համբերութեան և
սիրոյ. ո՛վ. բացցէ ինձ հոգի քո
զխոստմունս քո ի հեղուլ զերկ-
նային գանձս նոցա ի սիրտ իմ։

8 Ե՛կ առ Քրիստոս քաղցեալ
և ծարաւի վասն հոգեկան մխի-
թարութեանց, աղաղակեա՛ առ նա՛
հա՛ց, հա՛ց, Տէր տո՛ւր ինձ զկե-
րակուրն երկնային. թո՛ղ ինձ յա-
գենալ ի փշրանաց անկելոց ի սե-
ղանոյ քումմէ. տո՛ւր ինձ ըմպել
ի ջրոյն կենաց՝ զոր տալոց ես։ Փր-

՚շուր մի և շիթ իմն լիցի ինձ զու-
արթարար օշարակ, և խնջոյ պա-
րարտութեանց գինւոյ բարուք մաք-
րեցելոյ ՚ի մրրոց ։

9 Ե՛կ հոգածու տգիտութեան
քում՝ առ Քրիստոս վասն երկնայ-
ին ուսման. ասա՛ Տէր՝ քո է ու-
սուցանել ինձ, ապա թէ ոչ՝ եր-
բեք ոչ ուսայց, Ընդմիտ եմ իմա-
ցականութեամբ. բայց դու ուսու-
ցանես զժողովուրդ քո ՚ի բարին ։
Տէ՛ր՝ զի ընկալայց զհոգեկան տե-
սութիւնն իմ, եկեալ եմ աշակեր-
տել քեզ, Նստել առ ոտս քո,
ո՜հ շնորհեա՛ ինձ զուսումն բանի
քո՝ և զհոգւոյ քումսրբոյ ։

10 Ե՛կ անզօր և անբաւական
առ Քրիստոս՝ որպէս առ առաջ-
նորդ փրկութեան մերոյ, ընդդէմ

ընդ նմա թէ՝ քո է Տէր ուսուցա-
նել ձեռաց իմոց 'ի պատերազմ,
և մատանց իմոց 'ի ճակատամարտ,
եւ 'ի պատերազմ ընդ իս. ապա թէ
ոչ՝ անկելոյց առաջի հոգևոր թշնա-
մեաց իմոց: Որպէս Դաւիթ ընդ-
դէմ առիւծու, արջոյ և փղշտաց-
ւոյն. այնպէս գնացից 'ի զօրու-
թեան քում ընդդէմ ապականու-
թեանց և փորձութեանց. ընդդէմ
իշխանութեանց և զօրութեանց:

11 Եկ առ Քրիստոս բարե-
խօսն քո՝ որպէս զպատապարտեալ
մեղաւոր, մեղք քո ծանունք են,
չարախօսք քո բազումք են. խորա-
գէտք, զօրաւորք և խստասիրտք.
օրէնքն վճռէ զքեզ 'ի նզովս. մի-
ահեծան դատաւոր քո սրտմտեալ
է յոյժ, բայց Յիսուս տուեալ է

զանձն իւր վասն որոց քեզ նմանք
են. աղաչեմ զնա թէ Տէր կայ ընդ
մէջ արդարութեան Աստուծոյ և
կորստական հոգւոյս:

12 Ե՛կ առ Տէր քո և ուսու-
ցի՛չ Յիսուս Քրիստոս՝ որպէս հա-
ւատարիմ հպատակ և պատրաստա-
կան ծառայ, եկ և հնազանդեմ.
պատուեմ և սիրեմ զնա. նաև մինչ
ի մահ, ասա ցնա Տէր՝ ահա գլուխ
իմ ի գիտութեան քո. սիրտ իմ ի
սէր քո, լեզու իմ ի փառաբանու-
թիւն քո, ականջք իմ ի լսել ըզ-
ձայն քո. ձեռք իմ և ոտք իմ ի կա-
տարել զկամս քո. զինչ կամիս զի
արարից: Այլ տեարք բաց ի քէն
ունէին իշխանութիւն ի վերայ իմ.
բայց դու միայն ես իշխան և փրկիչ
իմ. ոչ տհաճիմ ընդ գոնէ մին ի

պատուիրանաց քոց. բայց զղջանամ
զի ոչ սիրեցի զքեզ առաւել եռան-
դեամբ. և ոչ հնազանդեցի քեզ
առաւել յօժարութեամբ։

13 Եւ որպէս անպիտան հար-
սն առ Քրիստոս՝ առ պատուա-
կան և փառաւոր գլուխ քո և փե-
սայ, եկ առ նա վասն զդեստուց
հարսանեացդ՝ միանգամայն և ան-
համեմատ բաժնի քո. ասա նմա տէր՝
անարգութեամբ մեղաց ծնայ Սա-
նուկ սատանայի, բայց դու ես տէր
երկնից, ո՜հ մեծ արա զիս շնորհօք
քովք, աղտեղի և գարշելի որպէս
արար զիս մեղք իմ, պատեա՛ մա-
քուր պատմուճանաւ քով. զի մի
երևեսցին ամօթանք իմ։

## ԳԼՈՒԽ Գ։

Զգուշալի քննութիւն անձին յամենայն առաւօտու ,

1 Է՞ր Աստուած 'ի մտի իմում
յանկանելն իմում 'ի վայր , և յառ-
նելս . և էի՞ն խորհուրդքն զնմա-
նէ քաղցր և պատուականք յոգւոյ
իմում ։

2 Ո՞ր կերպարան իցէ սիրտ իմ
յայսմ առաւօտու , զմտալեալ իցեմ
բարութեանն Աստուծոյ 'ի նինջ
յանցեալ գիշերոյ . վասն յաւելլոյ
զժամանակ 'ի կեանս իմ . և իցեմ
սրտի մտօք շնորհակալ ։

3 Կշռեմ արդարև յանձն առ-
նել զանձն և զամենայն գործս իմ
առ Աստուած յաւուր այսմիկ . զի
առաջնորդիցէ խորհրդովք նորա .

զի պաշտպանիցին և խնամարկիցեն նախախնամութեամբ նորա • և լիցին բոլորովին խնդութեամբ ի կամս նորա ։

4 Հաստատեալ իցեմ խոսել զԱստուծոյ և զփառաց նորա • և զօրութեամբ Քրիստոսի ոչ երբէք երկեայց՝ ամաչեցայց կամ վատակեցայց ի բարեգործութենէ ։

5 Մանուկ Աստուծոյ իցեմ և ժառանգորդ փառացն • թէ գերի մեղաց և մանուկ սատանայի • եթէ մանուկ Աստուծոյ իցեմ՝ ոչ ափածանիցեմ զհանդերձ արդարութեան • եթէ ժառանգ երկնից՝ ոչ է բաց մերկանայցեմ զհնոտիս ապականութեան և զգուշանայցեմ՝ յապականելոյ զիս մեղօք • չառնիցեմ առաւել քան զայլս ։

6 Ո՞վ է մեծագոյն խաբեբայն՝ եթէ սիրտ իմ. ո՛չ եղէց նախանձոտ և հսկու ՚ի վերայ նորա, ուր են մեծագոյն վտանգք և չարագոյն վրիպակք, եթէ յօգուտն հոգւոյ իմոյ՝ ո՛չ թողեց զամենայն առաւել քան զկորուսանել ազնիւ և անմահ հոգիս։

7 Ո՞յք իցեն անհաշտ, ոխերիմ զօրաւոր և հոգեկորոյս թշնամիք իմ. բայց եթէ աշխարհն, մարմին և սատանայ. և զգուշանայցեմ և կրջանայցեմ այնպէս առաքինի լինել որպէս զի ո՛չ դրօշեցից զառաջինն, ո՛չ պարարեցից զերկրորդն, կամ ունկնդիր եղէց երրորդին։

8 Ո՞վ իցէ կամ կարիցէ լինել լաւագոյն ՚ի բարեկամս իմ, բայց եթէ Աստուած, և ո՛չ երկնչեցիմ ՚ի

տհաճելոյ զնա առաւել քան զմահ, փափագելոյ շնորհաց նորա առաւել՝ քան կենաց. և ընդ ամենայն օրս այս սիրելոյ՝ պատուելոյ և հնազանդելոյ նմա ։

9 Ո՞ւր են մեծագոյն ունայնութիւնք և տառապանք. բայց եթէ յաշխարհի. և ես ո՞չ կացից վերագոյն նմին, չիցէ՞ աստուածապաշտու ին մեծագոյն շահ. և ես ո՞չ առնիցեմ զայն գերագանց ի գործ իմ ։

10 Ի՞նչ իցէ երկնաւոր գործ իմ. բայց ընթանալ զյառաջադիմութիւն, մարտնչել, վիճել և գօտեմարտել. և կարիցեմ առնել զայս ամենայն առանց զգուշութեան՝ ջանից և արթնութեան ։

11 Որո՞յ աչք լինիցին ի վերայ իմ զամենայն օրս զայս՝ տեսանել

զգլուխ իմ, զաչս, զշրթունս իմ և զկեանս՝ բայց նորա, որ է դատաւոր ամենայն աշխարհի. և համարձակեցայց մերձենալ ՚ի ներկայութեան նորա՝ և յանդիմանել նմա երես առ երես ։

12 Եթէ վատնեցից զօրս զայս յունայնութեան՝ ՚ի ծուլութեան և ՚ի մեղս. ոչ լինիցիմ տխուր ՚ի գիշերի ։ Եթէ ծախեցից սրբութբ և օգտակարութեամբ, ոչ աղօթեցից ես մեծագոյն յուսով. ոչ ընկողմանեցայց առաւել ես խաղաղութեամբ. և կալայց զվկայութիւն խղճի մտաց վասն ուրախութեան իմոյ ։

13 Որպէս ունիցիմ զի երևեսցի այս յաւուրն դատաստանի. ոչ պարտին խորհուրդք իմ, բանք և գործք

լինել այժմ այսպէս՝ որպէս ցանկամ
թէ լինիցին նոյնժամ ։

14 Որպէս կարիցեմ այս օր կարգել զաշխարհային զբաղանս իմ առաւելագոյն խմաստութեամբ և ի ճշմարիտ օգուտ իմ ։

15 Պատրաստ լիցիմ արդեօք մերձենալ առ Աստուած աղօթիւք․ և կարիցեմ ես խնդրել նախ և որպէս ըղձերագոյն ցանկութիւն իմ․ զթագաւորութիւն Աստուծոյ և զարդարութիւն Նորա ։—

## ԳԼՈՒԽ Դ ։

Զգուշալի քննութիւն անձին վասն ամենայն Երեկոյի ։

1 Օ Ի՞ՆՉ արարեալ լիցիմ այս օր վասն Աստուծոյ և փառաց Նորա․ զինչ կարիցեմ հայել յետս մխիթարութեամբ ։

2 Յո՞րպիսի ինչ կազմութեան լեալ իցէ սիրտ իմ զամենայն զայսօր. որո՞ց փափակեալ իցեմ, երկնայնո՞ց թէ երկրայնոց ։ Ուրախացեա՞լ իցեմ առաւել յԱստուած և ՚ի յոյս ապառնի փառաց, թէ յաշխարհային ճոխութիւնս՝ ՚ի պատիւս և ՚ի հեշտութիւնս ։ Տրտմո՞ւմ լեա՞լ իցեմ առաւել վասն մեղաց իմոց, թէ վասն աշխատութեանց կենցաղոյս ։ Ջանեա՞լ իցեմ զառաւել մխիթարութիւն յաղի ջրհորոցն՝ թէ յԱստուծոյ յաղբերէն ։

3 Ո՞ ինչ էին խորհուրդք իմ. լեա՞լ իցեմ մաքուր, և պահեա՞լ ըզխիղճ մտաց իմոց անմեղ առ Աստուած և առ մարդիկ ։ Կերա՞յ և արբեցա՞յ, աղաչեցի և խօսակից եղէ ՚ի փառս Աստուծոյ. կամ էի ինք-

նառաջին յամենայնի ։

4 Օ՜ ինչ հոգեկան պարտիս կատարեալ իցեմ այսօր. պահեցի զօրէնս՝ և զպատուիրանս. և արարի զնոսա ՚ի խղճէ մտաց իմոց, աղօթեցի ջերմեռանդութեամբ, ընթերցայ և խորհեցայ որպէս թէ աղբեր սրտի իմում։

5 Որպէս հաւատարիմ, յօժարամիտ և զգուշաւոր լեալ իցեմ ես ՚ի տեղւոջ իմում և ՚ի պաշտօնի. ո՞չ անցուցեալ ծուլութեամբ զժամս աւուրն ։

6 Օ՜ ինչ լեալ իցէ ընկերութիւն իմ այսօր. զի՞նչ բարի արարեալ իցեմ նոցա կամ ընկալեալ ՚ի նոցանէ։ Յանդիմանեցի, մխիթարեցի, զօրացուցի, զգուշացուցի որպէս նիւթն պահանջէր ։

7 Որպէս տարայ զաշխատանս և
զչարչարանս աւուրս այսմիկ · ո՞չ
երբէք քամահեցի զնոսա կամ նու-
աղեցայ ՚ի ներքոյ նոցա · կամ խոր-
հեցայ զդժուարինս զԱստուծոյ կամ
բարբառեցի յանդուգն բան ընդդէմ
նորա ։

8 Զի՞նչ էին փորձութիւնք
իմ այսօր ։ Հեշտութեամբ անկեալ
եղէ ՚ի մեղս · կամ հրաժարեցայ յա-
ւէտ ահացուցանող յամենատես ա-
չացն Աստուծոյ , յողորմած սրտէն ․
և ՚ի վրիժառու ձեռացն ։ Փութով
բարկացայ · և բարկութիւն իմ ընդ-
երկար տևողութեամբ եղև ։ Զըղ-
ջացայ զղմանէ · զինչ յանդիմանու-
թիւն , ողորմութիւն , կամ զգու-
շութիւն մեղաց ընդդէմ արարի ։

9 Զի՞նչ էին վայելչութիւնք իմ

և որպէս էր սիրտ իմ ընդ նոքօք ։ Ազդեցմա՛յ բարութեամբն Աստուծոյ առ իս՝ յառողջութեան իմում․ ի բարեկամս և ի ստացուածս իմ․ և սրտի մտօք շնորհակա՛լ եղէ․ վասնորոյ և խնդութեամբ սրտաբերեցի ի բարեգործութիւնս ։

10 Օ՜ ինչ ուսայ այսօր․ ստացայ զսրտապարար զխոստութիւն Աստուծոյ և փառաց նորա՝ զանձնէ և զմեղաց իմոց ․ զաշխարհէ աստի և զհանդերձելոցն ։

11 Օ՜ ինչ յիշիցեմ ի բանիցն Աստուծոյ ․ թէ ընթերցեալ՝ թէ լուեալ ․ էր գիրք ինչ սուրբ քաղցր հոգւոյ իմում ։ Խոստացա՛յ ինչ հաւատով անձին իմոյ ․ մասնաւոր պատուիրանք ինչ ուղղեցին զընթացս իմ ։

12 Օ՜ ի՛նչ շնորհս մասնաւորա-
պէս ՚ի գործ եդեալ լիցիմ. կեցեա՛լ
լիցիմ հաւատով. սիրեցի՛ զԱստուած
հայր որպէս բաժին իմ և երջան-
կութիւն. դիմեցի՛ առ Քրիստոս
որպէս առ փրկիչ, բարեխօս և բա-
րեկամ իմ. և առ Հոգին սուրբ՝
որպէս առաջնորդ իմ, զօրութիւն,
և մխիթարիչ, բորբոքելով քան
թէ շիջուցանելով զշնորհալի զօ-
րութիւնս նորա:

13 Վայելչաբա՛ր տրտմեցայ
վասն մեղաց կամ թշուառութեան
այլոց. բարեկամաց կամ թշնա-
մեաց, արտաքոյ կամ ՚ի տան. կամ
ստացեա՛լ լիցիմ բարեգութ սիրտ
և զառատ ձեռս առ ամենայն կարօ-
տեալս:

14 Մասնաւորապէս բարիս ա-

բարեաւ լցեալ նոցա՝ որք են ընտա-
նիք Հաւատոյ. և պատուեալ զնոսա
որք երկնչէին ՚ի Տեառնէ, Թէպէտև
՚ի ցնցոտիս և ՚ի վէրս նման Յոբայ
կամ Ղազարու. և մեծարեալ որ-
պէս զառաւել քան զմարգարիտս,
Թէպէտև գտեալս յաղբանոցի.

15 Եկեղեցին Աստուծոյ և իշ-
խանութիւն Քրիստոսի կայցեն ՚ի
մտի իմում. սրտի մտօք աղօթ-
եալ լցեալ վասն բարութեան սիով-
նի և ողբացեալ զաւեր նորա. կամ
նախադասեալ զԵրուսաղէմ ՚ի վե-
րոյ քան զվերագոյնս ուրախու-
թեան իմոյ.

16 Արդ գերդաստան իմ կամ
այնոքիկ՝ որք բարեգոյն ճանաչեն
զիս, խօսել զինէն զբարիս. լեալ
լցեալ և արարեալ զբարի՝ որպէս

այր․ կամ կին, ծնող կամ մանուկ, որպէս զտէր կամ ծառայ։ Ո՛չ լիցիմ վնասեալ ումեք ՚ի ստացուածս իւր՝ անցանելովս զնովաւ, զանուն նորա զրպարտելով կամ բամբասելով ՚ի հոգի կամ ՚ի մարմին նորա՝ զանց առնելով զմեղօք և զնեղութեամբ նորա։ Արարեա՛լ լիցիմ այլոց որպէս և ցանկայի նոցա առնել ինձ։

17 Ներեա՛լ լիցիմ թշնամեաց իմոց․ բերկրեա՛լ յուրախութիւնս այլոց․ և ոչ նախանձեալ կամ խնդացեալ պատուոյ և ճոխութեան մարդկան կամ բարեկամաց․ կռուեա՛լ չլիցիմ ընդ մերձաւորաց իմոց բայց գուն գործեա՛լ լիցիմ հաշտեցուցանել զթշնամիս և ունել խաղաղութիւն ընդ ամենայն մարդկան։

18 Ընթացք իմ լեա՛լ իցեն ա-
ռաքինիք, խոնհական և ծանր. լեա՛լ
չիցեմ ընդունայն, անառակ և սնո-
տի բնութեամբ և խօսակցութեամբ
իմովք ։

19 Անարգեա՛լ իցեմ զփառս աշ-
խարհիս այսորիկ, և համարեալ
զայն ՚ի կորուստ և ՚ի կղկղանս վասն
Քրիստոսի և շնորհաց Նորա ։

20 Եդեա՛լ իցեմ արդարև ըզ-
մահ առաջի իմ, և խորհեա՛լ ըզ-
կեանս իմ որպէս զմէգ և զստուեր ։
Օ ի՛նչ նախապատրաստութիւնս
արարեալ իցեմ վասն մահուան,
եթէ կափուցանիցէ Աստուած զա-
չըս իմ ՚ի մահ յայսմ գիշերի, որ-
պէս լինիցի ընդ հոգւոյ իմում ։ Հա-
մարձակիցա՛յ ընկողմանիլ ընդ դա-
տապարտութեամբ ներքնի մեղաց

21 Ընհասարակ մեծ, փառաւոր
և սոսկալի, որպէս օր դատաստանի
լինելոց է, իշխեցի՞ց ընդ յառաջ
կալ Քրիստոսի, որ գայ ՚ի քոյ
հրոյ հրեշտակօք բազմօք առնուլ
զվրէժ. Շնորհք իմ կրեսցէ զփորձ
աւուր այնմիկ և ես այսօր քննեալ
դատեալ և պատժեալ լիցիմ զիս
ինքն ։
22 Հաւատամ տանջանաց դժո-
խոց՝ թէ լիցին յաւիտենականք. և
փախչիմ արդարև ՚ի բարկութենէն
որ գալոցն է ։
23 Նայեցայց այսօր հաւատով
դէպ ՚ի նորին երուսաղէմ խոկացեալ
զփառաց նորա, կեցեալ և խօսակ-
ցեալ որպէս զժառանգ նորա ։
24 Յամենայնի զօրս և գործեցի
հայեցեալ եցեմ առ Աստուած ա-

ռաւել քանթէ առ մարդիկ, և առաւել փոյթ տարեա՛լ սրբել զսիրտ քան երևելի առնել զմարմին ։

25 Խոշխեցի՛ ննջել յայսմ գիշերի առանց աղօթից առ Աստուած՝ վասն թողութեան մեղաց իմոց և օգնութեան երկնային պաշտպանութեանն 'ի զօրութիւն և փրկութիւն հոգւոյ իմոյ ։ —

## ԳԼՈՒԽ Ե ։

*կանոն վասն սրբութեան աւուր Տեառն .*

1 ԽՄԱՍՏՆԱԲԱՐ տնօրինեա՛ց աւուրբ միով յառաջագոյն . զի չունիցիս վայրապար գործ ինչ յորում 'ի կիր արկանիցես զձեռս քո, կամ զգլուխ՝ յաւուր Աստուծոյ ։ Խորհեա՛ խնամով թէ զի՞նչ ծանր գործ իցէ, յոր հանդերձեալս ես,

աշխարհային գործք իմ միայն անօ-
տուք են համեմատեալք ընդ այնմ ։
Զի՞նչ են կրպակք , նաւք , կամ
կալուածք առ Քրիստոսիւ ․ առ
շնորհօքն կամ առ երկնօք ։ Կարի-
ցեմ լինել առաւել զգոյշ , կամ
ջերմեռանդ 'ի գործս Աստուծոյ ,
հոգւոյ և յաւիտենականութեան ։
Որպէս խորհուրդք իմ , շրթունք ,
կամք և արարք լինիցին սուրբք և
երկնայինք յաւուր Տեառն ։

2 Պատրաստեա վասն սրբոյ ա-
ւուր այսմիկ քննելով զսիրտ քո և
զկեանս ․ խորհեաց թէ զինչ մեղս
ունիցիս խոստովանել , ողբալ 'ի վե-
րայ և աղօթել ընդդէմ ։ Զի՞նչ ո-
ղորմութիւնք վասն հոգւոյ և մարմ-
նոյ պէտք իցեն թէ քեզ՝ թէ այլոց ․
որո՞ց օրհնութեանց ընդունելոց

զ՟րգլխի շնորհակալութիւնս դար-
ձուցանել ։ Խորհեա՛ց քեզէն թէ
զի՞նչ գտեր առաջին շաբաթումն ․ և
միաբանաւորապէս վերջնումն ։ Սիրտ
իմ բեկեալ էր յայնժամ վասն մե-
ղաց ․ կամ ջեռուցեալ երկնային
սիրով ․ հաստատապէս հաւատոյք
և հաւատարմապէս հնազանդեցայ
Ճշմարտութեանցն՝ զորս ուսայ ։ Ա-
ղօթեմ զի շաբաթն առաջի քո լինի-
ցի բարե գոյն քան զոր երբէք պա-
հեցեալ ․ սիրտ քո լինիցի առաւել
խոնարհ ․ գթած , և երկնային ․ զի
Աստուած կարիցէ ընդունել զա-
ռաւելութի փառաց ՚ի քէն ․ և դու
զառաւել հոգեկան օգուտս ․ և զի
լիցին քեզ օգտակար պահելոյ յա-
ւիտենական շաբաթն ընդ Աստու-
ծոյ ՚ի փառս ։ Հոյցեմ միաբանաւորա-

պէս թէ ո՛վ Աստուած շնորհաց՝
պատրաստեա՛ բան վայելուչ հոգւոյ
իմում, թող զի բացցի բերան պաշ-
տօնէի քում, ընդարձակեսցի սիրտ
նորա. և պատգամ նորա լիցի ըստ
սուրբ կամաց քոց: Մո՛ւտ ի տա-
ճար քո, և պսակեա՛ զկարգն ներ-
կայութեամբ և օրհնութ̅բ քով,
Տուր ինձ Տէր զականջս լսելոյ,
զաչս տեսանելոյ և զսիրտ իմանալոյ
զի ընկալայց հեզութեամբ զբանն
պատուաստեալ: Ա՛հ մի՛ թողուր սր-
տիս վրիպեցուցանել զիս. կամ աշ-
խարհի կամ սատանայի խոտորեցու-
ցանել կամ մոլորեցուցանել զիս,
Ընդ երանելին քո յառաւօտուց նո-
ւիրական աւուր այսմիկ՝ ուղղեալ
սիրտ քո և զաչս յերկինս՝ օրհնեմ
զԱստուած զի տեսանես զլոյս միւս

շաբաթու , յորում Հոգի քո զար-
դարի շնորհօք և վայելչանայ փա-
ռաց ․ աղաղակեմ առ Տէր Ներել
պակասաւոր պատրաստութեանց
քոց , համբերել տկարութեան քում ,
ընդունել զաղքատ ծառայութիւնս
քո , և Ճոխացուցանել զքեզ շնոր-
հօք իւրովք և խորհրդովք ։

4 Յառաջեմ առ ահեղ խոկմունս՝
մինչ սիրտ քո լնանիցի խորհրդով
զօրութեանն Աստուծոյ՝ որում պա-
տահելոց ես․ կամ անարգութեան մե-
ղաց , և քո՝ ՚ի պատճառս մեղաց ․
կամ գերազանցութեան ․ Քրիստոսի
և մեծութիւն սիրոյն կամ երկնային
էութեան աստուածային պաշտա-
մանն և շահու աստուածպաշտու-
թեանն , կամ թէ ունայնութեան
աշխարհի կամ արժէից անմահ հո-

դուոյ քո․ կամ՛ սրտմտութեան և խորագիտութեան հոգեկան թշնամեաց քոց, կամ՛ խաբէութեան սրտի քո իսկ, կամ՛ տանջանաց դժոխոց կամ՛ ուրախութեան երկնից։

5 Զգուշութեամբ և երկիւղածութեամբ տե՛ս զպարտիս բարեպաշտութեան ընտանեաց քոց, որպէս և քո իսկ առանձինն սենեկի։ Տե՛ս զի ծառայք և մանկունք քո ոչ վատնեն զառաւօտս զայս քնով և ծուլութեամբ։ Կոչեա՛ զնոսա միաւորել ընդ քեզ յընթերցմունս՝ յերգեցմունս և յաղօթս։ Ուսո՛ նոցա զփառաւոր Տեառնէն, որում ծառայես, անընդհատ օրհնութիւն այսպիսի պաշտաման և առատ հատուցումն՝ որ կայ և մնայ նմի՛ն, են կեանքն յաւիտենականք։ Ո դ-

գուշացի՛ զնոսա ՚ի վտանգէ անփոյթ առնելոյ զայս ծառայութիւն կամ խաղ առնելոյ զդոսա։ Պատուիրեա՛ նոցա լինել ճշմարիտ և ընտոյգ յառանձնական, յընտանի և ՚ի հասարակաց երկրպագութիւնս. այո՛ հսկեա՛ ՚ի վերայ նոցա զգուշաւոր աչօք և խանդակաթ սրտիւ։

6 Զանձն մատուցիր լինել հասարակ պաշտամանց, որք են քննիչք հոգւոց, ամոքիչք սրտից, և ահարկուք մեղաւորաց։

7 ՚Ի գնալ քո ՚ի տուն Աստուծոյ, եթէ առանձին իցես՝ խորհեաց, մի՛ թէ Աստուած ընդունէր զամենայն երկրպագուս իւր, և օրհնէր զհոգի իմ։ Եթէ յընկերութեան իցես խօսեաց զԱստուծոյ և զբանից նորա, բայց առանց հպար-

տութեան և կեղծեաց · կամ լուր երկնային խօսակցութեանն այլոց ։ Բայց եթէ իցեն այնք այնպիսիք՝ որք սիրիցեն միայն զաշխարհ և քամահեցեն զԱստուածպաշտութեամբ՝ արհամահեա՛ կամ թող զնոսա ։

8 Յորժամ մտանես ՚ի տուն Աստուծոյ վերացո՛ զսիրտ քո առ Նա այսպիսի հառաչանօք , որպիսիք են , Տէր խոստացար լինել ՚ի մէջ ժողովրդոց քոց · ո՛վ անցցին բարութիւնք քո զմեօք · տեսցուք զզօրութիւնս քո և զփառս սրբութե՛ քում · խոնարհեցո՛ զերկինս և էջ · մեծութիւն քո ահացուսցէ զմեզ · և բարութիւն քո նորոգեսցէ զմեզ՝ և բերկրեցուսցէ ։

9 ՚Ի տան Աստուծոյ պայման

արա աչօք քովք · և զգոյշ լեր 'ի մոլորութենէ սրտի · հաստատեա՛ զաչս քո 'ի պաշտօնեայն , զականջս քո՛ 'ի բանն · և սիրտ քո յԱստուած ։

10 Որ հոգեկան յամենայն մասունս պաշտամանն · մինչ պաշտօնեայն խոստովանի զմեղս՝ թող սիրտ քո փղձկասցի · բեկանեսցի և արիւնասցի ։ Յորժամ նա խնդրէ զթողութիւն՝ հոգի քո բոլորովին հառաչեսցէ զհետ նորա · յորժամ մատուցանէ զգոհութիւն՝ թող ամենայն որ 'ի քեզ է , օրհնեսցէ զանուն սուրբ Տեառն · սիրտ քո ներդաշնակեսցէ առ Աստուած յերգս օրհնութեան ։ Եւ յորժամ ձայն քո բարձրասցի՝ սիրտ քո մի՛ մնասցէ ստորև եալ կամ մեռեալ ։ Յոր-

ժամ բանն ընթերցանիցի՝ կամ քա-
րոզեսցի՝ զգուշութեամբ ՚ի միտ առ
թէ՝ այս է բանն Աստուծոյ, թէ
պատգամք նորա իցեն այնոքիկ,
իշխեցի՞ց անհնազանդ լինել այնց,
որով սպառնայ ինձ դատապար-
տութիւն, այո՛ և քարոզէ անէծս
՚ի վերայ մեղաւորաց. ո՞չ պարտ
իցէ ինձ ապա դողալ, Այնոքիկ
են կոչմունք նորա և հրաւէրք,
մեծ և ազնիւ խոստմունքն, և մեր-
ժեցի՞ց զնոսա. Դուք յաւետենա-
կան դրունք սրտի իմոյ բացարուք.
և թագաւոր փառաց մտցէ ՚ի ներ-
քըս. մինչ պաշտօնեայն բար բառէ
զօրհնութիւն՝ մի՛ փութար ար-
տաքս (յանցաւորութիւնդ առա-
ւել հաստատել.) բայց փափա-
գեա և հաւատա թէ գայցէ այն

ի վերայ քո երկնաւոր ազդեցու-
թեամբ ։

11 Յորժամ գաս ՚ի տանէն Աս-
տուծոյ զգոյշ լեր ․ զի մի՛ սատանայ
յափշտակիցէ զսերմն՝ որ սերմա-
նեալն ․ կամ փշալից տառապանք
աշխարհիս հեղձուցանիցեն զնա ․ մի
թողուր ընդունայն խօսակցութեց
ելանել ՚ի շրթանց քոց՝ ընդ ելա-
նել բանին Աստուծոյ ՚ի բերանոյ
պաշտօնէին ․ այլ խնդրեա՛ ՚ի Տեառ-
նէ ․ զի բանն զոր լուեալ իցես՝
մի՛ լինիցին քեզ որպէս զջուր ցա-
նեալ ՚ի վերայ երկրի ։ Աղօթեա՛ զի
միտք քո պահեսցեն զայն , սիրես-
ցեն զայն , և կամք քո հնազան-
դեսցին այնմ , զի կարասցեն խոր-
տակել զցանկութիւնս քո , բորբո-
քել զնախանձ քո առ Աստուած ,

լցուցանել զբերան քո բանիւք
բարութեան և զձեռս քո բարի
գործովք ։

12 Յորժամ ուտես զհաց քո՝ մի
լիցի սեղան քո որոգայթ հոգւոյ
քում. և մի ուտիցես աւելի քան
զոր պատրաստեսցէն զքեզ ծառայել
Աստուծոյ զուարթութեամբ և ժը-
րութեամբ ։ Հայցեա զերկնային
օրհնութիւնն՚ի հոգևոր և ՚ի մարմնա-
ւոր կերակուրս քո. ՚ի նստել և
յառնել քո միանգամայն լիցի սիրտ
քո երկնային. և զրոյցք քաղցր՝
համեմեալ շնորհօք ։

13 Զկնի ճաշուն կրկնեա զոր
ինչ լուար. կամ ընթերցեր յԱս-
տուածաշնչէ քում կամ յայլ ինչ
բարի գիրս, այսպէս ջանա տպաւո-
րել ՚ի միտս քո և ուրոց շուրջ զքև

զբա՛նսն՝ զորս լուար. և մի՛ թողուր զնոսա ՚ի ձեռանէ քումմէ։

14 Դա՛րձ տամբ քով ՚ի տունն Աստուծոյ. մի՛ խորհիր զկէսաւուրն բաւական Աստուծոյ և հոգւոյ քում։ Եթէ գայցես նախ քան զսկիզբն ժամերգութեան, ծախեա՛ զմիջոց քո ՚ի ջերմեռանդ խոկմունս կամ ՚ի կրօնական խօսակցութիւնս։ Ողբալի է տեսանել զգաւիթ եկեղեցւոյ լցեալ ծոյլ մարդկամբ խօսել ըզաշխարհային գործոց իւրեանց՝ կամ զայլոյ իմեքէ առաւել քան զհոգւոց իւրեանց։ Փոքր ինչ խորհին թէ որպէս անդադար սատանայ իցէ ընդ իւրեանս սերմանել զսերմն իւր ՚ի սիրտս իւրեանց. զի սերմն Աստուծոյ ոչ գտանիցէ զտեղի ինչ անդ։ Որչա՛փ առաւել բարեգոյն։

եթէ ասէին նոքա թէ զի՞նչ բարի բանս լուեալ լիցիմք յայսմ՝ յառաւօտու․ որպէս առաւել ևս հոգալ պարտ լիցիմք զերկնից յայսմ Յետ միջօրէի, զորոց ինչ այլք գործեն։ Ջեռո՛ զմիտ քո սիրովն Աստուծոյ զուարճացիր ՚ի ծառայութեան նորա․ անփոյթ սիրտ, թմրեալ մարմին, զանգաղ սէր, և մեռեալ ծառայութիւն չեն յարմար վասն կենդանւոյն Աստուծոյ։

15 Զգոյշ լե՛ր որպէս անցուցանիցես զերեկոյս․ սիրտ քո յարդարեա՞լ է յընդունայնութիւն զկնի հասարակ պաշտամանց աւուրն, եթէ Աստուած արարեալ իցէ զհաստատուն տպաւորութիւն ՚ի սրտի քում, մնացին և զօրասցին սահմանեալ երկրպագութեամբ զերդաս-

տանի և առանձին սենեկի քում, որպէս նաև բարեպաշտ և օգտաւէտ խօսակցութեամբ ընդ որոց շուրջ զքև իցեն ։

16 Նախ քան զընկողմանել քո ՚ի գիշերի՝ քննեա՛ զբովանդակ գործըս աւուրն, ա՛ռ քեզ զամօթ ամենայն սխալանաց քոց, և տուր Աստուծոյ զփառս ամենայն գերազանցութեանց ։ Հեզութեամբ խոստովանեա՛ թէ Աստուած միայն արժանի իցէ բարեգոյն սրտի ՚ի սիրել զնա ․ եթէ կարէի կատարել զամենայն զոր ինչ պատուիրեալն է՝ դեռ ևս և՝ լինէի ծառայ անպիտան ․ զի՞նչ իցեմ ապա՝ մինչ ամենայն պարտիք խառնեալք իցեն մեղօք և անհամար վրիպանօք ։ Մի՛ ապաւինիր յոր ինչ արարեալ ի-

ցես յընդունելութիւն և ի փրկութիւն քո․ բայց եթէ ի Քրիստոս միայն։ Հրաժարեմ յապահովութենէդ յարդարութիւն քո․ և ակն կա՛լ թէ ամենայն օրհնութիւնք և խոստմունք արեամբն Քրիստոսի զեղանին առ քեզ։

ՊԱՒԾԱՆ